ԶՕՐԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՅՈՒՇԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ (ԿՈՎԿԱՍԵԱՆ) ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1914 ՅՈՒԼԻՍ-1916 ԱՊՐԻԼ)

ՌՈՒԲԷՆ ՍԱՀԱԿԵԱՆ
rubensahakyan58@gmail.com

ՄՈՒՏՔ

Զօրավար-տեղակալ Թովմաս Յովհաննէսի Նազարբեկեանը (Ֆոմա Իւան Նազարբեկով, 1855-1931[1]), այն հազուադէպ զինուորականներից է, որ մասնակցել է միքանի պատերազմների՝ 1877-78ի ռուս-թուրքական, 1904-05ի ռուս-ճապոնական, 1914-17՝ Ա. Համաշխարհային Պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատի, 1918 Փետրուար-Յունիսի հայ-թուրքական, 1918 Դեկտեմբերին հայ-վրացական, 1918-20ի հայ-ադրբեջանական ընդհարումներին, 1920ի հայ-թուրքական մարտական գործողութիւններին:

Առաւել յայտնի է Նազարբեկեանի ռազմական գործունէութեան 1917-1920 շրջանը, ուստի մենք նպատակայարմար գտանք անդրադառնալու զօրավարի մարտական գործողութիւնների այն շրջանի լուսաբանմանը, որն ընդգրկում է 1914 Յուլիսից մինչեւ 1916 Ապրիլը, հիմնականում յենուելով Նազարբեկեանի ռուսերէն չհրապարակուած յուշերի վրայ, որոնք պահպանւում են Հայաստանի Ազգային Արխիւում (ՀԱԱ) զօրավարի անձնական ֆոնդում[2]: Յուշերը գրուած են ձեռագիր, թանաքով, աշակերտական տետրերում, որոնք 10ից աւելի են: Բացի այդ, Նազարբեկեանի անձնական ֆոնդում պահպանուել են ռուսերէն լեզուով հրամաններ, կարգադրութիւններ, նամակներ եւ այլ կարգի գրութիւններ, որոնք վերաբերւում են 1904-1905ի ռուս-ճապոնական պատերազմի եւ 1914-1917ի ռուս-թուրքական ռազմաճակատում

մղուած մարտական գործողութիւններին: Թարգմանութիւնները կատարել ենք մենք:

Կեանքի վերջին տարիները Նազարբեկեանը անց է կացրել Թիֆլիսում նիւթական անասելի ծանր պայմաններում: Զօրավարը ծանր հիւանդ էր, որն արդիւնք էր 1921ի ձերբակալութեան[3]: 1928 Յունուարի 16ին նա պաշտօնապէս դիմում է իշխանութիւններին, խնդրելով իրեն ճանաչել աշխատանքային հաշմանդամ եւ նշանակել թոշակ[4]: Թիֆլիսի խորհրդային իշխանութիւնները հրաժարուել էին զօրավարին զինուորական թոշակ նշանակել, պատճառաբանելով թէ նա պատերազմի ժամանակ չի վիրաւորուել:

Յուշերի շարադրման ժամանակ Նազարբեկեանին զգալի օգնութիւն է ցոյց տալիս Իւան Ենիկոլոպովը (Ենիկոլոպեան, 1888-1890): 1920ականներին Ենիկոլոպովը հանդիսանում էր Վրաստանում Խորհրդային Հայաստանի Արխիւային Վարչութեան ներկայացուցիչը եւ հնարաւորութեան դէպքում զօրավարին տրամադրել է արխիւային փաստաթղթեր:

Նազարբեկեանի յուշերը գրուել են 1928-1929ին: Նա օգտագործել է ոչ միայն իր մօտ պահպանուած փաստաթղթերը, որոնց մի մասը նրա ձերբակալուելուց յետոյ կորել էին, այլեւ նամակագրական կապ է ունեցել իր մարտական ընկերների՝ զօրավարներ Յովհաննէս Հախվերդեանի[5] եւ Մովսէս Սիլիկեանի (Մոիսէյ Սիլիկով)[6] հետ, որոնք իրենց հերթին օգնել են Նազարբեկեանին ճշտել այս կամ այն գործողութեան մանրամասները, լրացրել փաստերով այս կամ այն դէպքերն ու իրադարձութիւնները:

Կարելի է ենթադրել, որ զօրավարը նախաձեռնելով մարտական գործողութիւնների պատմութեան շարադրումը՝ նպատակ ունէր ոչ միայն իր նիւթական դրութիւնը բարելաւել, այլեւ ճշմարտացի ներկայացնել Ա. Համաշխարհային Պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացած մարտական գործողութիւնների պատմութիւնը, որը խորհրդային իշխանութիւնների կողմից 1920ականներից արդէն սկսել էր արժանանալ ոչ-անաչառ գնահատականի: Որքան զարմանալի է՝ նոյնիսկ մեր օրերում Նազարբեկեանի անցած մարտական ուղին ճիշտ չի լուսաբանում, օգտագործում են նախկինում եղած, մի շարք դէպքերում ոչ-անաչառ, փաստաթղթեր, որպէսզի անուանարկեն զօրավարին[7]:

1914-1918՝ Նազարբեկեանն ականատես է արեւմտահայութեան Ցեղասպանութեանը: Նրա հրամանով կատարուել են թուրք-քրդական գազանութիւնների հետեւանքների լուսանկարներ, ենթակայ սպաները ներկայացրել են զեկուցագրեր հայերի զանգուածային ջարդերի ու տեղահանութեան մասին: Զօրավարն իր յուշերում յիշատակում է առանձին քուրդ եւ թուրք անհատների կողմից հայերին փրկելու դէպքեր, որոնք եզակի էին:

1914-1916՝ մղուած մարտական գործողութիւնների ընթացքում զօրավարը բազմիցս առնչուել է հայ կամաւորական խմբերի եւ նրանց հրամանատարների հետ: Նա յատկապէս առանձնացնում է Դրոյի կամաւորական խումբը, որին զօրավար Սիլիկեանը խորհրդային տարիներին գրած նամակում հետեւեալ գնահատականն է տուել՝ «Դրոյի դրուժինան՝ դա փառահեղ դրուժինա է, Հայաստանի հպարտութիւնն ու գեղեցկութիւնն է»[8]:

Նազարբեկեանի հրամանատարութեան ներքոյ կռուել է Անդրանիկի Հայկական Ա Կամաւորական Խումբը: Զօրավարը այն եզակի հրամանատարներից էր, որի հեղինակութիւնը ընդունում էր Անդրանիկը:

Իր յուշերում զօրավարը անհիմն է համարում հայ կամաւորների հասցէին եղած ամբաստանութիւնները: Նա հերքում է փոխարքայ Ն. Ռոմանովի ժամանակ տարածուող կեղծ տեղեկութիւնները[9]՝ իբր հայերը իրականացրել են մահմեդականների զանգուածային կոտորածներ[10]:

Նազարբեկեանը բարձր է գնահատում ռուսական բանակի մարտունակութիւնը եւ եթէ որոշ դէպքերում քննադական խօսքեր է ասում մարտական գործողութիւնների ծրագրաւորման մասին եւ բարձրագոյն հրամանատարութեան հասցէին, ապա դրանք երբեւիցէ նպատակ չեն ունեցել վարկաբեկել կամ անուանարկել բանակը եւ հրամանատարութեանը: Զօրավարն աշխատել է անաչառ դիրքերից դիտել ու մեկնաբանել այս կամ այն գործողութիւնը եւ տուել է իր կարծիքը այս կամ այն որոշման մասին: Միաժամանակ չի թաքցրել իր հրճուանքը եւ հպարտութիւնը, երբ ներկայացրել է Կովկասեան Բանակի մղած այս կամ այն մարտական գործողութիւնը կամ ճակատամարտը:

Մեզ չյաջողուեց ՀԱԱում գտնել նրա յուշերի շարունակութիւնը, որոնք ընդգրկում են մինչեւ 1917 Հոկտեմբեր ընկած ժամանակա-

հատուածը: Նազարբեկեանի յուշերի միւս մասը, որն ընդգրկում է 1917 Հոկտեմբերից մինչեւ 1918 Ապրիլ, հրատարակուել են[11]:

1907ին Նազարբեկեանը պաշտօնաթող է լինում: Պատճառն այն էր, որ բարձրագոյն հրամանատարութիւնը հրաժարուել էր նրան շնորհել զօրավար-հազարապետի զինուորական կոչում եւ համաձայնուել էր այն շնորհել եթէ Նազարբեկեանը պաշտօնաթող լինի: Եւ Նազարբեկեանը, իրեն վիրաւորուած զգալով, նախընտրում է պաշտօնաթող լինել ու ստանալ այդ կոչումը:

Ցաւօք իր յուշերում զօրավարը չի գրում, թէ 1907-Յուլիս 1914 ժամանակահատուածը ինչով է զբաղուել: Նա իր յուշերի հիմնական մասը սկսում է շարադրել 1914 Յունիսի 28ից յետոյ, երբ Սարաեւոյում տեղի է ունենում աւստրիական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանութիւնը[12]: Մարտական պատրաստականութեան է բերւում նաեւ Կովկասեան Ռազմական Օկրուգը (ԿՌՕ): Կովկասից ռուս-աւստրիական ռազմաճակատ են տեղափոխւում առկայ ուժերի երկու երրորդը[13]: Օսմանեան յարձակման դէպքում փոխարքայութիւնը գտնուելու էր վտանգաւոր վիճակում: Նազարբեկեանը սխալ է համարում այդ ուժերի տեղափոխումը Կովկասից, քանի որ բանակներում կային մեծ թուով սպաներ, որոնք մասնակցել էին 1877-1878 ռուս-թուրքական պատերազմին եւ լաւ գիտէին մարտական գործողութիւնների շրջանը[14]: Ռուս-աւստրիական ռազմաճակատ է տեղափոխւում նաեւ Արմաւիրում կազմաւորուած եւ ԿՌՕ ուղարկելու համար նախապատրաստուած Կովկասեան Հեծելազօրային Դիւիզիան[15]:

ԶՕՐԱՎԱՐ ՆՊԱԶԱՐԲԵԿԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԸ

1914 Սեպտեմբերի սկզբներին ռուս-թուրքական սահմանի անմիջական հարեւանութեամբ սկսում են յայտնուել թուրքական հետախուզական հեծելապարեկախմբեր: Գերմանացի եւ թուրք սպաները բացայայտ կատարում են տեղանքի քարտէզագրում: Իսկ Սեպտեմբերի 15ին եւ 23ին Կարսի Մարզի շրջանում տեղի են ունենում զինուած բախումներ ռուսական սահմանն անցած թուրք եւ ռուս զինուորների միջեւ[16]:

1914 Հոկտեմբերի 16ի լոյս 17ի գիշերը գերմանա-թուրքական ռազմանաւերը հրետակոծեցին ռուսական սեւծովեան Սեւաստոպոլ, Նովոռոսիյսկ եւ Թէոդոսիա քաղաքները: Հակառակորդին

յաջողուեց ջրասոյզ անել ռուսական միքանի ռազմական եւ առեւտրական նաւեր ու վնասել ափամերձ մի շարք շինութիւններ: Ի պատասխան այդ ծովահենային յարձակման, 1914 Հոկտեմբերի 20ին Ռուսաստանը, ապա Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսիան պատերազմ յայտարարեցին Օսմանեան Կայսրութեանը:

Սկսած Յուլիսի 18ից Նազարբեկեանը բազմիցս դիմումներ էր կատարել Կովկասեան Բանակի շտաբ, խնդրելով իրեն ընդունել ծառայութեան: Սակայն շտաբի բարձրաստիճան սպաներից՝ զօրավար Բորիս Վսելովզորովը անընդհատ յետաձգում էր, խուսափում էր որեւէ յստակ պատասխան տալ, տարբեր պատճառաբանութիւններ կատարելով:

Հոկտեմբերի սկզբին Նազարբեկեանին է դիմում 66րդ Հետեւակային Դիւիզիայի շտաբի պետ, գնդապետ, յետագայում զօրավար Եւգենի Լեբեդինսկին, յայտնելով, որ իրենց մօտ ազատ է զօրաբաժնի հրամանատարի պաշտօնը եւ խորհուրդ է տալիս դիմել Կովկասեան Բանակի շտաբ եւ խնդրել իրեն նշանակել այդ պաշտօնին: Սակայն Վսելովզորովը մերժում է, պատճառաբանելով, որ այդ պաշտօնն զբաղեցուած է:

Երկար սպասելուց եւ անընդհատ անորոշ պատասխաններ ստանալուց յետոյ Նազարբեկեանը որոշում է անմիջականօրէն դիմել Կովկասեան Բանակի շտաբի պետ, զօրավար Նիկոլայ Եուդենիչին: Վերջինս առաջարկում է անմիջապէս զեկուցագիր գրել եւ ներկայացնել իրեն: Եուդենիչը անմիջապէս Նազարբեկեանին նշանակում է 66րդ Դիւիզիայի հրամանատարի տեղակալ: Հոկտեմբերի 16ին զօրավարին տեղեկացնում են, որ ստացուել է նոր հրաման՝ նրան նշանակել են Կովկասեան Բ. Հրաձգային Բրիգադի հրամանատար: Զօրամասը գործելու էր Հիւսիսային Պարսկաստանում տեղակայուած «Ադրբեջանական[17]» Ջոկատի՝ Կովկասեան Դ. Հեծելազօրային Դիւիզիայի կազմում, որի հրամանատարն էր զօրավար Ֆէոդոր Զեռնոզուբովը: 1914 Հոկտեմբերի վերջերին Նազարբեկեանը ժամանում է Խոյ, որտեղ տեղակայուած էին զօրագնդի զօրամասերը:

Նազարբեկեանը յուշերում յիշատակում է իր զրոյցները հայ հասարակական նշանաւոր գործիչներից մէկի՝ Յակոբ Զաւրիեանի (Եակով Զաւրիեւ) հետ: Զօրավարը յաճախ է անդրադառնում այդ գործչին, նրա գործունէութեանը եւ զգացում է այն յար-

գանքը, որ նա տածում էր Զաւրիեանի նկատմամբ[18]: Վերջինս, զօրավարի հետ ունեցած զրոյցում յայտնում է, որ ՀՅ Դաշնակցութիւնը բազմիցս զգուշացրել էր ռուսական հրամանատարութեանը, որ Օսմանեան Կայսրութիւնը նախապատրաստւում է յարձակուելու Ռուսաստանի վրայ, սակայն ԿՌՕի ղեկավարութիւնը անուշադրութեան է մատնում այդ կարեւոր տեղեկութիւնը: Հրամանատարութիւնը համոզուած էր, որ օսմանեան Թուրքիան պատերազմի մէջ կը մտնի միայն 1915ի գարնան: Այդ էին վկայում ռուսական հետախուզական տուեալները, որոնց ԿՌՕի հրամանատարութիւնն աւելի շատ էր վստահում[19]:

Իր յուշերում զօրավարը անդրադարձել է հայ կամաւորական խմբերի կազմաւորմանը եւ նրա հրամանատարներից միքանիսին: Նազարբեկեանը նրանց որակում է որպէս «սիրուած ժողովրդական հերոսներ»[20]: Նա նշում է, որ ռուսական հրամանատարութիւնը սկզբնապէս թոյլատրում է ձեւաւորել չորս խումբ[21]: Զօրավարը թուարկում է չորս խմբերի հրամանատարներին[22]:

Նազարբեկեանը հարկ է համարում ընդգծել այն փաստը, որ 1914ի ամռանը Էրզրումում (Կարին) ՀՅԴի ղեկավարները հրաժարուել են երիտթուրքերի առաջարկութիւնից՝ Կովկասում խռովութիւններ բարձրացնել եւ օժանդակել թուրքական զօրքին[23]:

1914ի Նոյեմբերին Հիւսիսային Պարսկաստանում Ադրբեջանական Ջոկատը զգալի յաջողութիւնների է հասնում: Դա հարկադրում է քրդական ցեղերին ուղիներ որոնել ռուսական հրամանատարութեան հետ համաձայնութեան գալու եւ դիմադրութիւնը դադարեցնելու համար:

Զօրավար Չեռնոզուբովը Նազարբեկեանին, որպէս «օգնութիւն» ուղարկում 50 հեծեալ քրդերի: Զօրավարը բացասաբար է վերյիշում այդ խմբի մասին, որոնք «ոչ մի օգուտ չտուեցին», քանի որ զբաղւում էին բացառապէս կողոպուտով[24]:

1914 Նոյեմբերի 15ին Նազարբեկեանի առաջապահ ուժերը գրաւում են Կոթուր գիւղաքաղաքը: Նա հետաքրքիր տեղեկութիւն է հաղորդում տեղի բնակչութեան մասին: Պարզւում է, որ Կոթուրի բնակչութիւնը մահմեդականութիւն ընդունած հայեր էին[25]:

Զօրավար Չեռնոզուբովը Նազարբեկեանի միջոցով առաջարկում է Անդրանիկին իր խմբով շարժուել Վան, խոստանալով նրան տալ նաեւ երկու լեռնային թնդանօթ[26]: Իրավիճակը, սա-

կայն, կտրուկ փոխուեց, քանի որ Սարիղամիշ Քաղաքի շրջանում սկսուել էին ծանր մարտեր, իսկ Պարսկաստանում հակառակորդն աշխուժացրել էր գործողութիւնները:

Մեր կարծիքով ջոկատի հրամանատարի առաջարկը բաւականին վտանգաւոր էր, քանի որ յայտնի չէր թէ ինչպէս էր իրականացուելու խմբի մատակարարումը, ինչ ուժեր ունէր հակառակորդը եւն.: Այս եւ այլ պատճառներ հաշուի առնելով էր, որ զօրավար Նազարբեկեանը որոշեց թոյլ չտալ կամաւորներին շարժուել Վան[27]: Անդրանիկի ունեցած հետախուզական տեղեկութիւնների համաձայն հակառակորդն ունէր շուրջ երեսուն հազար զինուոր եւ 4 թնդանօթ[28]:

Ստեղծուած իրավիճակում Նազարբեկեանը որոշում է նահանջել: 1914 Դեկտեմբերի 1ին տրւում է նահանջի հրամանը: Ա. խմբին յանձնարարւում է պաշտպանել զօրագնդի գումակը: Ռուսական զօրքի հետ միասին հարկադրուած էր հեռանալ հայ եւ ասորի բնակչութիւնը: Նահանջի ընթացքում զօրավարը միքանի անգամ հարկադրուած էր դիմել հակագրոհների, որպէսզի զսպի կրնկակոխ հետեւող հակառակորդին: Մարտերում միքանի անգամ աչքի են ընկնում հայ կամաւորները:

Դեկտեմբերի 5ին ռուսական զօրքը նահանջում է Բաշկալէից: Տեղի կայազօրի հրամանատարը հարկ չէր համարել քաղաքը շրջապատող բարձունքներում պահակակէտեր նշանակել, որից եւ օգտւում է հակառակորդը եւ անսպասելի յարձակումով ստիպում ռուսական ուժերին հապշտապ նահանջել:

1914 Դեկտեմբերի 20ին ստացւում է զօրավար Չեռնոզուբովի հրամանը՝ պատրաստ լինել շարունակելու նահաջել: Նազարբեկեանն այդ մասին յայտնում է Զաւրիեանին, որին այդ լուրը խորապէս վշտացնում է: Զօրավարը սկսում է սփոփել եւ յուսադրել, որ ամէն ինչ դեռ վերջացած չէ: Նա հետեւեալն է պատասխանում. «Ինչպէս չտխրի, երբ որ իր ողջ կեանքը նուիրել է հայ ժողովրդի ազատագրութեանը եւ այժմ ամէն ինչ փուլ է գալիս այն պատճառով, որ Կովկասեան ղեկավարութիւնը անուշադրութեան մատնեց իր տեղեկութիւնները հակառակորդի մեծաքանակ ուժերի մասին»[29]: Ի բարեբախտութիւն, շուտով ստացւում է ուրախալի նորութիւն՝ Սարիղամիշի շրջանում օսմանեան Գ. բանակը պարտութիւն է կրել: Այս լուրին հետեւում է անհեթեթ հրաման՝

շարունակել նահաջը դէպի Խոյ: Այս արդէն տարօրինակ որոշում էր: Թշնամին ջախջախուած է, որեւէ վտանգ չկայ: Սակայն կատարւում է անհասկանալին՝ փոխանակ վերականգնելու կորցրած դիրքերը, հրաման է տրւում շարունակել նահանջը:

Դեկտեմբերի 23ին Նազարբեկեանն իր զօրագնդով սկսում է նահանջել: Ա. խմբին հրամայում է իրականացնել հայ եւ ասորի բնակչութեան պաշտպանութիւնը: Զօրավարը նկարագրում է այն սարսափելի տանջանքները, որոնց ենթարկւում էր հայ եւ ասորի բնակչութիւնը: Նրա խոստովանութեամբ, զինուորականներից շատերը չէին կարողանում զսպել իրենց արցունքները, ականատես լինելով մինչեւ գօտկատեղը հասնող ցեխաջրի միջով անցնող կանանց ու երեխաներին[30]: Զինուորականները եւ կազակները հնարաւորինս օժանդակում էին փախստականներին: Դեկտեմբերի 26ին զօրագնդի զօրամասերը հասնում են Խոյ, որտեղ հրաման է ստացւում նահաջել Ջուլֆա: Կրկին տարօրինակ եւ անհեթեթ հրաման: Դեկտեմբերի 27ին Նազարբեկեանի մօտ է գալիս Զաւրիեանը եւ խնդրում որեւէ կերպ հասնել նրան, որպէսզի նահանջի հրամանը կասեցուի: Սակայն ապարդիւն: Այդ ժամանակ Նազարբեկեանի խորհրդով Զաւրիեանը հեռագրում է Կովկասի փոխարքայ եւ բանակի գլխաւոր հրամանատար Ի. Վորոնցով-Դաշկովին, որին ճանաչում էր անձնապէս եւ փոխարքան իսկոյն կասեցնում է նահանջը[31]:

1915ի Փետրուարի կէսերին զօրավար Չեռնոզուբովը[32] որոշում է վճռական գործողութիւնների դիմել Հիւսիսային Պարսկաստանում: Փետրուարի 18ին սկսւում են աշխուժ մարտական գործողութիւնները: Մարտերում կրկին աչքի է ընկնում Ա. Խումբը: Սպաներից շատերին հիացրել էին հայ մարտիկների հմուտ գործողութիւնները[33]: Ապա որոշ ժամանակ պարսկական ռազմաճակատում հաստատւում է յարաբերական դադար:

Նազարբեկեանը յիշատակում է 1915 Ապրիլի 7ին Վանում սկսուած հայերի ինքնապաշտնական մարտերի մասին: Նա մանրամասն ներկայացնում է հայերի դիմադրութեան պատճառները, ընդգծելով, որ հիմնական պատճառը՝ օսմանեան իշխանութիւնների վարած հայաջինջ քաղաքականութիւնն էր:

Այս շրջանում Նազարբեկեանի վարած կռիւներից ամենանշանաւորը Դիլմանի ճակատամարտն էր: Օսմանեան հրամանատա-

րութիւնը, որն ունէր լրտեսական լայն ցանց ինչպէս Հիւսիսային Պարսկաստանում, այնպէս էլ Ադրբեջանական Ջոկատում, կարողացել էր պարզել, որ Դիլման քաղաքում եւ շրջակայքում ռուսները չունեն բաւարար քանակութեամբ զօրք, ուստի որոշում է նախաձեռնել յարձակում: Յարձակումը նպատակ ունէր Դիլմանի շրջանում ջախջախել ռուսներին, ապա յարձակուել Երեւանի ուղղութեամբ եւ տիրել Բաքուի նաւթային շրջաններին, միաժամանակ ոտքի հանել Կովկասի մահմեդականներին: Այդ նպատակով, 1915 Մարտին Վանի Նահանգից Պարսկաստան ուղղուեց Խալիլ բէյի հրամանատարութեան տակ գտնուող Հաւաքական 3րդ Դիւիզիան:

Խալիլի նպատակն էր Դիլմանի մօտ ռուսներին ջախջախելուց յետոյ շարժուել Ջուլֆա, ապա համալրել զօրաբաժինը տեղի մահմեդականներով, ներխուժել Զանգեզուր-Ղարաբաղ, Ելիզաւետպոլի ու Բաքուի նահանգները: Իսկ ռազմաքաղաքական բարենպաստ պայմանների դէպքում Խալիլը արշաւելու էր Դաղստան եւ Կովկասի մահմեդական ապստամբ բնակչութեան օգնութեամբ անջատէր երկրամասը Ռուսաստանից[34]:

Զօրավար Չեռնոզուբովը Ապրիլի 16ին Դիլմանի շրջան է ուղարկում Կովկասեան Բ. Հրաձգային Բրիգադը Զօրավար Նազարբեկեանի հրամանատարութեամբ[35]: Նրա հրամանատարութեան ներքոյ կար ութ գումարտակ, 12 հարիւրեակ եւ 12 թնդանօթ: Բ. Բրիգադի դէմ գործում էր Խալիլի 10-12 գումարտակ, 12 թնդանօթ եւ մօտ 6 հազար քրդեր[36]:

1915 Ապրիլի 15ի լոյս 16ի գիշերը հակառակորդն անցաւ յարձակման եւ գրաւեց Դիլմանը: Կովկասեան Բ. Հրաձգային Բրիգադի զօրամասերը յայտնուեցին դժուարին կացութեան մէջ, քանի որ դեռեւս ոչ բոլոր ուժերն էին տեղ հասել: Զօրավար Նազարբեկեանը յուշագրում է. «Այդ ծանր րոպէին ես նկատեցի առաջացող ոչ-մեծ զօրամաս: Պարզուեց, որ դա հայկական դրուժինայի վաշտն էր Սումբատի (Սմբատ Բորոյեան - Ռ.Ս.) գլխաւորութեամբ, որը մէկ օր առաջ ուղարկուել է Կարաթեփէի Լեռնանցքը հետախուզութեան...»[37]: Նազարբեկեանի հրամանով կամաւորներ դիրքեր գրաւեցին Մուխանջիկ գիւղից հարաւ-արեւելք՝ դիմագրաւելու պաշտպանութեան ձախ թեւի օղակման փորձ կատարող թշնամուն՝ թոյլ չտալով նրան անցնել թիկունքը: Զօրա-

վարը գիտակցելով, որ ճակատամարտի յաջողութիւնը կախուած է հայ ռազմիկների արիութիւնից, հրամայեց Սմբատին «մեռնել, բայց չնահանջել»[38]:

Հայերի զբաղեցրած դիրքերը Դիլմանի բանալին էին: Հակառակորդի խիտ զօրաշարքերը յարձակւում էին հայկական վաշտի զբաղեցրած պաշտպանական տեղամասի վրայ: Նազարբեկեանի վկայութեամբ. «Դրուժիննիկները ստիպուած էին միքանի անգամ ձեռնամարտի բռնուել հակառակորդի հետ: Սումբատի ուժականութեան եւ անվեհերութեան շնորհիւ, հակառակորդի բոլոր սրընթաց յարձակումներն ապարդիւն անցան եւ դրանից յետոյ հակառակորդը դադարեցրեց յարձակումը եւ նահաջեց»[39]:

Զօրավար Նազարբեկեանն ըստ արժանւոյն է գնահատում իր զօրամասի դիրքերը գրոհող թուրք զինուորների մարտական պատրաստականութիւնը եւ քաջութիւնը: Հակառակորդն անընդհատ գրոհում էր խիտ զօրաշարքերով, ձգտելով ճակատային գրոհը զուգակցել ռուսների ձախ թեւի օղակումով: Այն նպատակ ունէր զօրամասը կտրել Խոյից՝ իր մատակարարման եւ հաղորդակցութեան միակ ուղուց[40]:

Իրավիճակը սրւում էր նաեւ այն պատճառով, որ Խոյի հետ կապող միակ ճանապարհով փախչում էին հազարաւոր հայ եւ ասորի փախստականներ: Դա նաեւ բացասաբար էր ազդում զօրքի բարոյահոգեբանական վիճակի վրայ:

Ապրիլի 17ի առաւօտեան ժամանեցին լրացուցիչ ստորաբաժանումներ, այդ թւում՝ Հայկական Ա Խմբի միւս վաշտերը Անդրանիկի հրամանատարութեամբ: Այդ օրը հակառակորդը բաւարարւում է միայն ռուսական դիրքերի հրետակոծութեամբ եւ աշխուժ գործողութիւնների չի դիմում:

Նազարբեկեանի գնահատմամբ, չնայած որ Խալիլ բէյը, շնորհիւ իր լրտեսական ցանցի, ամենայն մանրամասնութեամբ տեղեակ էր իր թուային եւ կրակային առաւելութեան մասին, այնուամենայնիւ չէր կարող հասնել յաջողութեան, քանի որ կորցրել էր յարմար պահը՝ մէկ օրով ուշացնելով յարձակումը: Խալիլն այդ հնարաւորութիւնն ունէր Ապրիլի 16ին, երբ Բ. Հրաձգային Բիգադի զօրամասերը նահանջում էին, չկար պահեստազօր, իսկ նման դէպքում «աղէտն անխուսափելի կը լինէր»[41]: Այդ էր պատճառը, որ Խալիլն անընդհատ գրոհում էր,

ձգտելով օգտագործել իր թուային գերակշռութիւնը: Նա հաշուի չէր առել ռուս հետեւակային զինուորների, կազակների եւ հայ կամաւորների քաջութիւնն ու արիութիւնը, որոնք չնայած բարդ պայմաններին կարողացան հարկադրել Խալիլին մէկ օրով յետաձգել գլխաւոր յարձակումը: Յատկապէս աչքի են ընկնում ռուս հրետանաւորները, որոնք դիպուկ կրակով կարողանում են լռեցնել հակառակորդի թնդանօթները:

Ապրիլի 18ի վաղ առաւօտեան ժամը 4ին հակառակորդն անցաւ յարձակման: Թուրքական գրոհի գլխաւոր հարուածն ուղղուած էր ռուսական պաշտպանութեան կենտրոնին եւ ձախ թեւին: Կենտրոնի պաշտպանութեան ողջ ծանրութիւնն ընկած էր Հայկական Ա. Խմբի վրայ: Անդրանիկն անձամբ շրջում էր կամաւորների դիրքերը, քաջալերում մարտիկներին «յիշեցնելով անոնց պարտականութիւնները»[42]:

Անյաջողութեան մատնուելով կենտրոնում, թուրքերը հարուածն ուղղում են հակառակորդի աջ թեւին, ձգտելով անցնել ռուսների թիկունքը: Այստեղ դիրքաւորուած հետեւակային 6րդ գնդի զինուորները, որոնք համալրուած էին գլխաւորապէս պահեստազօրից, ցանկանում են լքել դիրքերը: Միայն Նազարբեկեանի ազդու միջամտութիւնից յետոյ, շարունակում են մարտը[43]:

Հակառակորդի գրոհը ետ մղուեց, որից յետոյ զօրավարն իր ուժերով անցնում է հակայարձակման: Իր հերթին Անդրանիկը յարձակման տանելով մարտիկներին թուրքերին դուրս է մղում Բարչիշլի գիւղից, որով վերջնականապէս ամրապնդեց ռուսների յաղթանակը: Մարտը դադարում է միայն գիշերը[44]:

Ապրիլի 19ին Նազարբեկեանը հրամայում է սկսել Խալիլի զօրաբաժնի հետապնդումը: Նոյն օրը ստացւում է Զօրավար Զեռնոզուբովի շնորհաւորական հեռագիրը ուղղուած Նազարբեկեանին եւ յայտնում է, որ նա ներկայացուել է Ս. Գէորգիի խաչով պարգեւատրուելու համար: Ստացուեց նաեւ Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովի շնորհաւորական հեռագիրը:

Դիլմանի ճակատամարտում թուրքերի կորուստը եղել է մօտ երկու հազար սպանուած, իսկ ռուսներինը՝ 600 սպանուած եւ 800 վիրաւոր[45]: Կամաւորներից զոհուեց 21, վիրաւորուեց 55 հոգի[46]:

Ապրիլի 19ին Ադրբեջանական Ջոկատի կազմում Կովկասեան Բ. Հրաձգային Բրիգադը շարժւում է Վանի ուղղութեամբ: Ինչպէս

պարզւում է յետագայում, Խալիլի ուժերի հետապնդումը հարկադրում է վերջինիս օգնութեան հասնել Վանը պաշարող թուրք-քրդական ուժերին[47]: Զօրավարը ուրախութեամբ արձանագրում է, որ Մայիսի 4ին Վանը ազատագրւում է թուրք-քրդական շրջապատումից, որոնք տեղեկանալով ռուսական ուժերի առաջխաղացման մասին, շտապում են փախչել:

Մայիսի 2ին Նազարբեկեանի զօրամասը շարժւում է Դերիկ: Այստեղ նա այցելում է Ս. Բարթուղիմէոսի Վանքը, որտեղ մնացել էին շինութեան փլատակները: Զօրավարին՝ վանքը, նրա պատմութիւնը ներկայացնում է Ա. Խմբի կամաւոր Աշխարհբէկ Քալանթարը՝ մասնագիտութեամբ հնագէտ եւ պատմաբան:

Վանքն ամբողջութեամբ կողոպտուած էր, քրդերը նոյնիսկ փորձել էին քանդել Ս. Բարթուղիմէոսի աճիւնը, սակայն նրանցից մէկի անակնկալ մահը թոյլ չէր տուել աւարտել դամբարանի թալանը[48]:

Նազարբեկեանը վկայում է այն ջերմ ընդունելութեան մասին, որ ցուցաբերում են Վանի բնակիչները կամաւորներին եւ ռուսական զօրքին, իսկ Բայազէտի ջոկատի հրամանատար (Անդրկասպեան Կազակային Զօրամասի հրամանատար) զօրավար Անդրէյ Նիկոլաեւին, որը նշանակուել էր Վանի զինուորական պարետ, Արամ Մանուկեանը յանձնում է քաղաքի բանալիները: Զօրավարը արձանագրում է այն կարեւոր փաստը, որ Արամը ռուսական հրամանատարութեան կողմից նշանակւում է Վանի եւ ազատագրուած գաւառների նահանգապետ: Նազարբեկեանը հպարտութեամբ հաւաստում է. «Վանի պաշտպանութիւնը ցոյց տուեց, որ հայերը աղքատիկ միջոցներով կարող են հակահարուած տալ ուժեղ թշնամուն»[49]:

1915 Յունիսի 10ին Կովկասեան Բ. Հրաձգային Բրիգադը Զուխ Գեադուկի Լեռնանցքով շարժուեց Վան, ուր հասաւ Յունիսի 14ին, բանակեց քաղաքի մօտիկ Կուրուբաշ գիւղում: Ճանապարհին, բոլոր բնակավայրերում հանդիպում էին հայերի դիակներ, որոնց սպանել էին քրդերը եւ Ջեւդէթ բէյի ելուզակները[50]:

Յունիսի 15ին զօրավարը, Ա. Խմբի բժիշկ Տէր-Թովմասեանի հետ այցելութեան են գնում Արամին, սակայն պարզւում է, որ նա շտապ գործերով մեկնել է գաւառ: Փոխարէնը ծանօթանում է փոխ-նահանգապետ Պարոյր Լեւոնեանի հետ: Նազարբեկեանը

հետեւեալ կերպ է նկարագրել Վանը. «Քաղաքի տեսքը շատ գրաւիչ էր եւ մաքուր: Այն ամբողջութեամբ կանաչի մէջ էր եւ լաւ տպաւորութիւն էր թողնում: Փողոցները բաւականին լայն էին»[51]:

Երեկոյեան վերադառնալով Կուրուբաշ, զօրավարը ընդունում է քաղաքի ու նահանգային իշխանութիւններից կազմուած պատուիրակութեանը. նրանց հետաքրքրում էր միայն մէկ հարց՝ որքանով է կայուն իրադրութիւնը: Զօրավարը, լաւ գիտենալով, թէ ինչպէս կարող է իրադրութիւնը կտրուկ փոխուել, որոշակի ոչինչ չի ասում: Նա միայն խորհուրդ է տալիս լաւ կազմակերպուել եւ յոյսը դնել իրենց վրայ[52]:

Բայազէտի Ջոկատի կողմից Վանը գրաւելուց յետոյ, հակառակորդը սկսեց ուժեր կուտակել Վանայ Լճի հարաւային ափին: Այդ կողմից Վանը պաշտպանելու նպատակով այնտեղ ուղարկուեց առաջապահ ջոկատ զօրավար Իւան Տրուխինի գլխաւորութեամբ: Բացի ռուսական ստորաբաժանումներից ջոկատի կազմում ընդգրկւում են Հայկական Ա., Բ., Գ. եւ Դ. խմբերը: Համատեղ ուժերով յաջողւում է հակառակորդին փախուստի մատնել եւ գրաւել նրա չորս թնդանօթները:

Զօրավարը իր յուշերում վկայակոչում է սահմանապահ գումարտակի հրամանատար, գնդապետ Ուշակովի կողմից հայ հրամանատարներին տրուած գնահատականները: Կարելի է ենթադրել, որ Նազարբեկեանը վկայակոչելով ռուս զինուորականին, խուսափել է անձամբ գնահատականներ տալ, սակայն, ելնելով այն հանգամանքից, որ վկայակոչում է գնդապետին, կարելի է ընդունել է, որ ինքն էլ որոշ չափով համաձայն է:

«Քեռի»: Հայկական դրուժինաների պետերից առաւել համակրելին է: Ռազմական գործը գործնականում լաւ է հասկանում եւ որպէս հրամանատար մարտի ժամանակ իր տեղում է: Նկատուել է միջամտութիւնները մանրուքներում...: Ռուս սպաների շրջանում վայելում է յարգանք, չնայած ռուսերէն չգիտէր: Շատ քաջ է եւ մարտում սառնասիրտ: Ղեկավարութիւնից իրեն հեռու է պահում:

Համազասպ: Խելօք, հասկացող, փոքր ինչ անտեղի իրարանցման ենթարկուող: Սիրում է երեւալ ղեկավարութեան առջեւ: Ռազմական գործը հասկանում էր, սակայն խուսափում էր իրեն ռիսկի ենթարկել: Քաղաքավարի է եւ մարդամօտ:

Դրօ: Շատ խելացի է: Բանիմաց: Տաքարիւն: Մարտը լաւ է ղեկավարում: Քաջ է, սիրում էր զբաղուել քաղաքականութեամբ եւ այդ մասին զրոյցներ վարել: Երբեմն մատնում էր իր հակառուս լինելը: Իր էութեամբ դաժան է: Ռուսական ղեկավարութիւնը եւ սպայութիւնը նրան չէին սիրում:

Անդրանիկ: Իր մեծամտութեամբ բոլորի վրայ վատ տպաւորութիւն էր թողնում: Զօրադասաւորման հետ հաշուի չէր նստում, հրամանները չէր կատարում: Զէյվայի մօտ մարտի նախօրեակին, երբ ամէն ինչ պատրաստ էր, առաջարկեց գրոհի իր ծրագիրը, որը ռազմական տեսանկիւնից անգրագէտ էր կազմուած եւ աչքի էր ընկնում անսովոր բարդութեամբ: ...Ընդհանրապէս զգացւում էր որ նա ի զօրու չէ ղեկավարել մեծ ջոկատ: ...Քեռիին, Համազասպին եւ Դրոյին չի կարելի կշտամբել անկարգապահութեան համար»[53]:

1915 Յունիսի 16ին զօրավարը իր զօրագնդով շարժւում է Վանայ Լճի հիւսիսային ափով: Ճանապահին հանդիպում են դատարկ, սակայն տեսքով բարեկեցիկ հայկական գիւղերը, որոնք աւերուած էին ու լի մարդկանց ու կենդանիների դիակներով:

Յունիսի 18ին զօրագնունդը բանակում է Փանզ հայկական գիւղում, իսկ Յունիսի 21ին հասնում են Արճէշ: Զօրավարի վկայութեամբ, ռուս զինուորներին, որոնց թւում կային նաեւ Կուբանից, զարմացրել էին տեղի գաւառի հացահատիկի բերքառատութիւնը, որը գերազանցում էր իրենցը[54]: Տների մեծ մասը քանդուած էր, բնակչութիւնը հիմնականում կանայք եւ երեխաներ էին՝ տղամարդիկ սպանուել էին: Արճէշ չեն մտնում, քանի որ քաղաքում տարածուած էր բծաւոր տիֆը: Վանայ Լճի հիւսիսային ափով անցնելիս լսւում էին հարաւից եկող հրացանաձգութեան եւ հրետանու կրակոցների ձայները:

Յունիսի 23ին զօրագունդը հասնում է հայկական Նորաշէն գիւղը, իսկ յաջորդ օրը զօրավարը հրաման է ստանում առաջանալ դէպի Ադիլջեւազ (Արծկէ): Յունիսի 26ին Արծկէից զօրագունդը շարժւում է Խանիկ, ուր հասնում է երեկոյեան ժամը 17ին: Ճանապարհին հանդիպում են քրդական գիւղեր իրենց բնակիչներով, իսկ Խանիկում բնակւում էին չերքէզներ[55], որոնք հեռացել էին նահանջող օսմանեան զօրքի հետ:

Յունիսի 27ին Նազարբեկեանը զօրախումբի հրամանատար զօրավար Պիոտոր Օգանովսկուց ստանում է հրաման՝ Յունիսի 28ին յարձակուել Կոփի ուղղութեամբ: Հրամանատարը միաժամանակ յանդիմանում է Նազարբեկեանին, որ նրան չի յաջողուել ոչնչացնել Խալիլ բէյի զօրաբաժինը, որին զօրավարը հակադարձում է, ասելով, որ դժուար էր առկայ ուժերով շրջապատել հակառակորդի զօրաբաժինը, որը մշտապէս հնարաւորութիւն ունէր նահանջել եւ լրացնել ուժերը[56]:

Յունիսի 28ին զօրամասի հրամանատարի կարգադրութեան համաձայն Կովկասեան Դ. Հրաձգային Գունդը ուղղւում է Լաթէր, ապա Դերիկ, որտեղ գտնւում էր զօրավար Օգանովսկու շտաբը:

Յունիսի 29ի առաւօտեան ռուսական ուժերը անցնում են յարձակման՝ նպատակ ունենալով թուրքերին դուրս մղել Կոփից եւ գրաւել Փուրխուս գիւղը: Սակայն յարձակումը աւարտւում է անյաջողութեամբ, ռուսներն ունենում են զգալի կորուստներ: Կովկասեան Է. Հրաձգային Գնդի հրամանատար, գնդապետ Վսեվոլոդ Օբրազցովին[57] յաջողւում է գրաւել Փուրխուսը, սակայն նա աջակցութիւն չի գտնում 66րդ Դիւիզիայի ստորաբաժանումներից, որի հետեւանքով ստիպուած է լինում նահանջել:

Յունիսի 29ին հակառակորդը՝ ստանալով համալրում, անցնում է յարձակման: Ռուսական հրամանատարութեան կողմից ձեռնարկուած միջոցներն աւարտւում են անյաջողութեամբ, քանի որ հակառակորդին յաջողուել էր գրաւել տեղանքի վրայ գերիշխող բարձունքները:

Յունիսի 30ին Նազարբեկեանը հրաման է ստանում իր ուժերով՝ Կովկասեան Ե. Հրաձգային Գնդով լեռնային հրետանու մէկ մարտկոցով շարժուել Լաթէր գիւղը, իսկ Յուլիսի 1ին գրոհել եւ գրաւել Թորթօն գիւղը: Հետախուզական տուեալներից հետեւում էր, որ հակառակորդը կարողացել էր լաւ նախապատրաստուել. գերիշխող բարձունքները գտնւում էին նրա ձեռքում, խրամատները միքանի շարք էին: Թշնամու ուժը գնահատւում էր մօտ երեք գումարտակ: Փաստօրէն, յարձակումը յղի էր մեծ կորուստներով, ուստի Նազարբեկեանը որոշում է օգտագործել իր գերազանցութիւնը հրետանիում: Յաջողութեանը նպաստեց այն, որ մարտկոցներից մէկին յաջողուեց թեւային կրակ բացել, որը եւ որոշեց յարձակման ելքը: Թուրքերը չկարողացան դիմակայել եւ

խուճապահար փախուստի են դիմում: Զօրավարը յուշագրում է. «Երբ մենք մօտեցանք հակառակորդի դիրքերին կամ աւելի ստոյգ խրամատներին՝ ապշեցինք այն տեսարանից, որ յառնեց մեր դէմ: Բոլոր խրամատները բառիս բուն իմաստով լցուած էին դիակներով, որ հետեւանք էր այն երկու թնդանօթների շրապնելային[58] կրակի, որոնք կրակել էին խրամատների երկայնքով: Մարդկանց մեծ մասը բարձրահասակ էին, ամրակազմ, թուխ դէմքերով եւ հանդերձանքը շատ լաւն էր»[59]:

Նոյն օրը զօրավար Օգանովսկին հրամայում է Յունիսի 2ի առաւօտեան Ե. Գնդի մէկ գումարտակով եւ չորս լեռնային թնդանօթներով տեղակայուել Կեկերլիւ գիւղում: Դա նշանակում էր թուլացնել Ե. Գնդին: Նազարբեկեանը գտնում էր, որ հակառակորդը լրացուցիչ ուժեր ստանալով անպայման փորձելու է վերադարձնել կորցրած դիրքերը եւ գունդը կը յայտնուի դժուարին իրավիճակում: Սակայն, զօրավար Օգանովսկին մնաց իր տեսակէտին: Նազարբեկեանը հրամայում է Դոկուչաեւին՝ ամրացնել դիրքերը եւ ուշադիր լինել, քանի որ հաւանական է, որ գիշերը թուրքերը կը փորձեն անցնել յարձակման:

Գալով Կեկերլիւ գիւղը, զօրավարը տեղեկանում է, որ իր ենթակայութեան ներքոյ անցնելու են կազակների[60] 22րդ Գումարտակը երկու թնդանօթով, Կովկասեան Զ. Գնդի երկու գումարտակ եւ Լաբինսկեան Կազակային Գունդը:

Հակառակորդի դիրքերի վրայ յարձակումը սկզբնապէս յաջող ընթացաւ: Աջ շարասիւնը, հրետանու աջակցութեամբ արագօրէն առաջ էր շարժւում եւ սպառնում դուրս գալ հակառակորդի թիկունքը, նաեւ նկատւում էր, որ թուրքերի շրջանում խուճապ էր սկսել: Զօրավարի մօտ է գալիս զօրամասի շտաբի պետի պաշտօնակատար կապիտան Մ. Զինկեւիչը[61]: Ընդհանուր առմամբ յարձակումը ընթանում էր ըստ նախատեսուած ծրագրի: Սակայն, այդ նոյն ժամանակ, թիկունքում՝ Թորթօնի կողմից լսուեցին հրետանային եւ հրացանային կրակոցներ: Միաժամանակ զօրավար Նազարբեկեանի ուժերի ուղղութեամբ շարժւում էին հակառակորդի մեծաքանակ ուժեր: Զօրավարի համար պարզ դարձաւ, որ գնդապետ Դոկուչաեւը չի կարողացել զսպել հակառակորդին եւ այժմ թուրքերը յարձակւում են

Թորթօնի կողմից: Իրավիճակը ծանր էր: Երեք կողմից Նազարբեկեանի վրայ էին ուղղուել թշնամու մեծաքանակ ուժերը:

Զօրավարի հրամանով ձեռնարկւում են համապատասխան միջոցներ հակառակորդի յարձակումը ետ մղելու համար: Ռուսական հրետանու դիպուկ կրակը հարկադրում է նրանց դադարեցնել յարձակումը: Միաժամանակ կապիտան Զինկեւիչը պատրաստակամութիւն է յայտնում գնալ Ե. Գնդի մօտ եւ իմանալ մանրամասները: Որոշ ժամանակ անց կապիտանը զեկուցում է, որ գնդապետ Դոկուչաեւի ուժերը, վաղ առաւօտեան ենթարկուել են թուրքական յարձակմանը եւ նահանջել Թորթօնից:

Զօրավարի վկայութեամբ, այդ ծանր պահին իրեն է մօտենում Լաբինսկեան Կազակային Գնդի զօրային աւագ[62] Պիոտր Աբաշկինը[63] եւ խնդրում թոյլատրել իր հեծելագնդով անցնել յարձակման, քանի որ տեղանքը յարմար էր նման գործողութեան համար: Նազարբեկեանի խոստովանութեամբ՝ «անկեղծօրէն ասած, ես շատ զարմացայ այդպիսի նախաձեռնութեանը, եւ իհարկէ, ուրախութեամբ համաձայնուեցի»[64]:

Կազակային հեծելագնդի սրընթաց եւ անսպասելի յարձակումը ցնցող ազդեցութիւն է թողնում թուրքերի վրայ, որոնք սկսում են անկանոն նահանջի: Յարձակման է անցնում հե-տեւակը: Գերւում են հակառակորդի մօտ 300 զինուոր եւ միքանի սպայ[65]:

Յաջորդ օրը զօրավարը հրաման է ստանում տեղում թողնել Զ. Գնդի մէկ գումարտակ, 2 լեռնային թնդանօթ եւ պլաստունեան 4 գումարտակներով շարժուել Թորթօն, ապա Նազիկ՝ թուրքերի թիկունքը, որոնք գտնւում են զօրավար Գ. Շարպանտիէի[66] ջոկատի դիմաց, ապա ուղղուել Մուշ: Նշուած գործողութիւնը իրականացնելու էին միաժամանակ միքանի ջոկատներ:

Զօրավարի յուշերից հետեւում է, որ վերը առաջարկուած գործողութիւնը եղել է վատ կազմակերպուած, բանակային հետախուզութիւնը որեւէ յստակ տեղեկութիւն չի կարողացել հայթայթել հակառակորդի ուժերի եւ տեղակայման վերաբերեալ եւ միայն երջանիկ պատահականութիւնն է փրկել Նազարբեկեանի ջոկատը ոչնչացումից[67]:

1915 Յուլիսի 5ին զօրավարի ջոկատն անցնում է յարձակման Նազիկ եւ Մեծք գիւղերի ուղղութեամբ, գրաւելով բնակավայրերը:

Իսկ Թափավանք գիւղի մօտ կազակները գերում են մօտ 500 թուրք զինուորների, որոնց ուղարկում են Մանազկերտ[68]:

Ճանապարհին հանդիպում են թուրք-քրդական գազանութիւններից հրաշքով փրկուած հայերի, որոնք հիմնականում Մշոյ դաշտի հայկական բնակավայրերից էին: Ռուս զինուորները, չնայած յոգնութեանը, պատրաստակամութեամբ գրկում կամ ուսերի վրայ տանում էին երեխաներին[69]: Զօրավարի խոստովանութեամբ, ինքը ցանկանում էր որբերից մէկին որդեգրել, սակայն տղան հրաժարւում է առաջարկից՝ ասելով, որ ինքը պէտք է գտնի իր ծնողներին, եթէ ողջ չգտնի, ապա պէտք է վրէժխնդիր լինի թուրքերից:

Յուլիսի 7ին զօրավարը շարունակում է յարձակումը եւ հասնում Նեմրութ Լեռան լանջին գտնուող Քանաշիր գիւղը, որի բնակչութիւնը ամբողջութեամբ սպանուած էր:

Զօրավարը իր միքանի յանձնակատարներով շարժւում է Մուշ տանող ճանապահով, նպատակ ունենալով հասնել Վարդենիս գիւղը: Հեռուից նա ականատես է լինում, թէ ինչպէս են այրւում գիւղերը: Սակայն, հրաման է ստացւում մէկ գունդ ուղարկել զօրավար Շարպանտիէին:

Ինչպէս նշում է իր յուշերում Նազարբեկեանը, տագնապալի լուրեր էին հասնում, թէ թուրքերը մեծ համալրում են ստացել եւ թէ իրավիճակը Քոփի եւ Մանազկերտի շրջանում տագնապալի է:

1915 Յուլիսի 8ին Նազարբեկեանը ստանում է նահանջի հրաման: Յուլիսի 9ին նրա ջոկատը Քանաշիր գիւղից դուրս է գալիս եւ հասնում Թափավանք: Ստացւում էին տագնապալի լուրեր: Այսպէս, Լաբինսկեան Կազակային Գնդի հրամանատար, գնդապետ Ա. Նոսկովը[70] Մշոյ դաշտից յայտնում էր, որ առաջանում են թուրքական 12 գումարտակ[71]: Թափավանքում զօրավարը հրաւիրում է սպայական խորհրդակցութիւն՝ ցանկանալով իմանալ նրանց կարծիքը, թէ ինչ անել: Սակայն ոչ ոք որեւէ յստակ կարծիք չի յայտնում: Ի վերջոյ Նազարբեկեանը վճռում է նահանջել: Այս գործողութիւնը կապուած էր մեծ դժուարութեան հետ, քանի որ Մշոյ Դաշտից գալիս էին մեծ թուով փախստականներ, անհրաժեշտ էր ապահովել նրանց անվտանգութիւնը: Զօրավարը վկայում է. «Շատ զինուորներ, չնայած յոգնածութեանը, իրենց ուսերի վրայ էին տանում փախստական-

ների երեխաներին: Թափավանքում ականատես եղայ հետեւեալ տեսարանի՝ մէկոտանի մի հայ խնդրում էր զինուորներին փրկել իր փոքրիկ եղբայրներին: Հայ զինուորները պատրաստակամութեամբ ընդունեցին նրանց, ցանկանում էին նոյնպէս եւ նրան (աւագ եղբօրը - Ռ.Ս.) նստեցնել փամփուշտներ [տեղափոխող] երկանիւ սայլակին, սակայն նա կտրականապէս հրաժարուեց հետեւել նրանց, ասելով, որ որոշել է մեռնել իր տանը»[72]:

Նազարբեկեանի ջոկատը մէկ օրուայ ընթացքում անցաւ 50 վերստ ճանապարհ եւ բանակեց Փուրխուս գիւղում: Զօրավարը յուշագրում է իր առաջին հանդիպումը Դրոյի եւ նրա խմբի հետ: Նազարբեկեանի խոստովանութեամբ, ե՛ւ Դրօն ե՛ւ Բ. Խումբը լաւ տպաւորութիւն են թողնում ե՛ւ իր ե՛ւ շրջապատի վրայ: «Դրուժինան արտաքինով յիշեցնում էր լաւ, կանոնաւոր զօրամաս»[73]:

Ա. Խումբը տեղ է հասնում բաւականին վատ վիճակում. կամաւորները յոգնել էին երկարատեւ ռազմարշաւից յետոյ, բացի այդ նրանք ճնշուած վիճակում էին, որի պատճառը նահանջն էր: Նրանցից շատերը Մշոյ Դաշտի գիւղերից էին եւ խիստ մտահոգուած էին այնտեղ մնացած հարազատների ճակատագրով:

1915 Յուլիսի 19ի առկայ ուժերով Նազարբեկեանը մտնում է Առնիս, որտեղից դուրս է գալիս Յուլիսի 20ին՝ մեծ թուով փախստականների հետ: Առնիսում զօրավարը թողնում է Կովկասեան Է. Հրաձգային Գնդի մէկ գումարտակ, Ա. եւ Բ. Հայկական խմբերը, Ներչինսկեան Կազակային Գունդը եւ հրետանու մէկ մարտկոց՝ հրամայելով սպասել այնքան մինչեւ որ անցնեն վերջին փախստականները Արճէշից եւ Վանից:

Բերկրիի կիրճում կուտակուել էին մեծ թուով փախստականներ: Կրկին զօրավարի աչքի առջեւ յառնում են 1914 Դեկտեմբերի հայ եւ ասորի փախստականների պատկերները:

Նազարբեկեանի համար անբացատրելի էր Վան քաղաքից նահանը: Նրա համոզմամբ Վանին ոչ մի վտանգ չէր սպառնում: Քաղաքում եւ շրջակայքում կային բաւականչափ ուժեր, որոնք ի զօրու էին պաշտպանել Վանը: Զօրավարին զարմացրել էր նաեւ այն, որ զօրավար Նիկոլաեւի Բայազէտի Ջոկատն այնքան շուտափոյթ է անցել Բերկրիով՝ դրանով փախստական հայերի շրջանում առաջացնելով մեծ խուճապ: Նազարբեկեանի

համոզմամբ. «այդ նահանջը, որը չունէր որեւէ հիմք, պէտք է համարել յանցաւոր: Զօրավար Նիկոլաեւի ջոկատին ոչինչ չէր սպառնում...: Հակառակորդը ճնշում չէր գործադրում, եւ չէր էլ երեւում, որ նրա ուժերը զգալի էին:... Յետագայում դէպքերը ցոյց տուեցին այդ նահանջի, աւելի ստոյգ՝ փախուստի անիմաստ լինելը: Այդ անմիտ քայլի հետեւանքը եղաւ մեծ թուով փախստականների կորուստը եւ նրանց լիակատար սնանկացումը»[74]:

Բերկիրում զօրավարը հրաման է ստանում առանց կանգառի շարժուել նախկին ռուս-թուրքական պետական սահմանը: Փախստականներին պաշտպանում էին Դրոյի խումբը եւ նրան կամաւոր միացած սահմանապահների հեծելավաշտը[75] հեծելավաշտի հրամանատար Կորոլկովի հրամանատարութեամբ:

Նազարբեկեանի վկայութեամբ ողջ ճանապարհը լեփ-լեցուն էր փախստականներով, այստեղ կամ այնտեղ կային մահացած ծերունիների եւ երեխաների դիակներ: Այդ հանգամանքը կրկին ու կրկին բերում էր այն մտքին, որ զօրավար Նիկոլաեւի անխնայ եւ արագ նահանջի հետեւանքով տեղի ունեցան նման դժբախտութիւններ: Զինուորները եւ կազակները հնարաւորութեան սահմաններում օժանդակում էին փախստականներին:

1915 Յուլիսի 21ից մինչեւ 23ը զօրավարի ջոկատը եւ փախստականները շարժւում էին նախկին պետական սահմանի ուղղութեամբ, կատարելով կարճատեւ կանգառներ: Բոլորին ուրախացրեց այն հանգամանքը, երբ յայտնուեցին Ռուսական Կայսրութեան տարածքում եւ կանգառ ունեցան Կըզըլ Դիզէում, ապա Դիադինում: Ռուսական ուժերի ձեռնարկած յարձակումը հարկադրում է թուրքերին նահանջել: Այստեղ իր դերն ունեցաւ զօրավար Եուդենիչի կողմից կազմուած մարտական ծրագիրը, որը փայլուն կերպով իրականացրեց զօրավար Ն. Բարաթովը[76]:

1915 Յուլիսի 30ին Նազարբեկեանի զօրագունդը կայանում է Խամօ գիւղում, ապա Սանժանում, որտեղ մնում են մինչեւ Օգոստոսի 14ը: Այստեղ զօրավարը փորձում է որոշ չափով բաւարարել իր ջոկատի մարտիկների կարիքները՝ սկսած հագուստից վերջացրած կօշիկներով: Սակայն, համբարակային ծառայութիւնը դեռ չէր հասցրել բերել անհրաժեշտ պարագաները, ուստի զինուորների մեծ մասը շարունակում էին կրել պատառոտուած ու մաշուած հագուստ եւ կօշիկներ առանց ներբանների:

Զօրավարն իր յուշերում շարունակում է անդրադառնալ 1915 յուլիսեան նահանջին: Այս անգամ նա ներկայացնում է հայ հասարակութեան շրջանում շրջանառուող լուրերը նահանջի վերաբերեալ: Նազարբեկեանը նշում է, որ Ա. եւ Բ. խմբերի Իգդիրում տեղակայուելուց յետոյ հայերի շրջանում լուրեր են տարածւում, թէ ռուսական հրամանատարութիւնը դիտաւորեալ է հայ կամաւորներին ուղարկում առաջին գիծ, իսկ նրանց ետեւում տեղակայում է կանոնաւոր ուժեր, որն իբր նպատակ ունի ոչնչացնել կամաւորների եւ հայերին զրկել ռազմական ուժից: Իշխանութիւնները միաժամանակ նախատեսում էին դադարեցնել կամաւորների հաւաքագրումը եւն.:

Զօրավարի վկայութեամբ այդ ամէնը չեն համապատասխանում իրականութեանը: Անդրանիկը եւ Դրօն մշտապէս ձգտում էին լինել առաջին գծում, միշտ լինել առջեւում: Սակայն զօրավարը կատարում է կարեւոր մի խոստովանութիւն, որը բացատրում է հայերի շրջանում տարածուող լուրերի պատճառները: Նա գրում է. «Պատերազմի սկզբում թուրքահայերի (արեւմտահայերի - Ռ.Ս.) մօտ ուժեղ ձգտում կար ռուսների նկատմամբ, սակայն, այն բանից յետոյ, երբ նախատեսուեց Ալաշկերտի հովիտը բնակեցնել կազակներով, այդ ձգտումը ուժեղ կերպով թուլացաւ եւ տեղի ունեցաւ լիակատար հիասթափութիւն»[77]:

1915 Օգոստոսի 20ին Կովկասեան Դ. Բանակային Կորպուսի շտաբից ստացւում է Կովկասեան Բանակի գլխաւոր հրամանատար Վորոնցով-Դաշկովի նամակը, ուր յայտնւում է, որ զօրավար Նազարբեկեանը, որպէս ռազմաճակատի առաւել արժանաւոր սպայ, պարգեւատրուել է ֆրանսիական «Միլիթէր» մեդալով[78]:

1915 Օգոստոսի 28ին ստացւում է հեռագիր, որտեղ ասուած էր, որ Ռուսաստանի զինուած ուժերի հրամանատարութիւնն իր վրայ է վերցրել ցար Նիկոլայ Բ.ը, իսկ նախկին գլխաւոր հրամանատար, մեծ իշխան Ռոմանովը նշանակուել է Կովկասի փոխարքայ եւ Կովկասեան Բանակի գլխաւոր հրամանատար: Նազարբեկեանի գնահատմամբ, բոլորը ցաւում էին Վորոնցով-Դաշկովի հեռանալուց, քանի որ բարձր էին գնահատում Կովկասի փոխարքայի եւ գլխաւոր հրամանատարի պաշտօնում նրա կատարած աշխատանքը:

Այդ նոյն ժամանակ Կովկասեան Բանակի հրամանատարութիւնը, յանձին զօրավար Եուդենիչի լայնածաւալ, գաղտնի աշխատանքներ են նախաձեռնում Էրզրումի (Կարին) ամրոցը գրաւելու համար: Զօրամասեր ուղարկւում են հրամաններ, որտեղ նշւում են, որ միջոցառումներ պէտք է ձեռնարկուեն ստորաբաժանումները ձմեռային պայմանների համար նախապատրաստելու համար: Հրամայւում են կառուցել ձմեռային կացարաններ, ուժեղացնել պաշտպանական ամրութիւնների շինարարութիւնը, կառուցել բաղնիքներ եւն.: Թիկունքային ծառայութիւնները սկսում են զանազան շինանիւթերի եւ այլ պարագաների մատակարարումը, որոնք պետք է օգնէին արագօրէն կազմակերպել բանակի ձմեռումը: Այդ ամէնը կատարւում էր բացայայտ: Իրականում, վերը նշուած բոլոր միջոցառումները նպատակ ունէին մոլորեցնել հակառակորդին, որպէսզի վերջինս անտեղեակ մնար ռուսական հրամանատարութեան նախապատրաստութիւններին: Բացի այդ, օսմանեան հրամանատարութիւնը, հաշուի առնելով 1914-1915ի ձմեռային մարտական գործողութիւնների փորձը, գտնում էր, որ աշնանային եւ ձմեռային պայմաններում ռուսները չեն նախաձեռնի որեւէ յարձակողական գործողութիւն: Զօրավար Եուդենիչը շտապում էր իրականացնել Էրզրումի գրաւման գործողութիւնը, որովհետեւ յայտնի էր դարձել, որ դաշնակիցները որոշել են 1916 Յունուարին դադարեցնել նեղուցների գրաւման գործողութիւնը: Իսկ դա հնարաւորութիւն կը տար օսմանեան հրամանատարութեանը Դարդանէլի շրջանից լրացուցիչ ուժեր տեղափոխել ռուս-թուրքական ռազմաճակատ եւ դա ստիպում էր Եուդենիչին արագացնել նախատեսուող գործողութիւնը:

1915 Հոկտեմբերին Նազարբեկեանի Կովկասեան Բ. Հրաձգային Բրիգադը վերակազմաւորւում է որպէս Կովկասեան Բ. Հրաձգային Դիւիզիայի: Կովկասեան Դ. Բանակային Կորպուսի հրամանատար զօրավար Օգանովսկին յայտնում է Նազարբեկեանին, որ ինքը նրան ներկայացրել է զօրավար-տեղակալի կոչմանը: Սակայն, ինչպէս պարզւում է յետագայում, զօրամասի հրամանատարի ներկայացումը անհասկանալի պատճառներով «անհետանում» է: Զօրավար Օգանովսկին, որին տեղափոխում են Մինսկ, Նազարբկեանի խնդրանքով, երկրորդ անգամ է նրան

ներկայացնում զօրավար-լտեղակալի կոչմանը, սակայն ապարդիւն[79]:

Բանակային հրամանատարութեան հրամանով, ձմեռային կացարաններում գտնուող զօրամասերին հրամայւում է անընդհատ իրականացնել ուժեղացուած հետախուզութիւն եւ տեղեկութիւնները զեկուցել դաշտային բանակի շտաբին: Յատկապէս անհրաժեշտ էին հակառակորդից ձեռք բերել «լեզուներ»՝ գերիներ, որոնց քննութեան միջոցով հնարաւոր կը լինէր առաւել մանրամասն տեղեկութիւններ ստանալ: Առաջաւոր գծերում գտնուող ստորաբաժանումները միքանի անգամ փորձ են կատարում, սակայն, անյաջող: Գունիբեան Գնդի սպաներից, փոխգնդապետ Արտեմ Յովսէփեանցին յաջողւում է գերել հակառակորդի մարտական պահպանութեան 80 զինծառայողի[80]: 1915 Նոյեմբերի 19ին զօրավար Նազարբեկեանը նշանակւում է Կովկասեան Բ. Հրաձգային Դիւիզիայի պետ[81]:

Իր յուշերում զօրավարը յիշատակում է զինուորական քահանայ Ռուբէն Բեկգուլեանցին, որը այցելում էր զօրամասեր՝ հայ զինուորների հոգեւոր պահանջները բաւարարելու համար: Նա միաժամանակ աշխուժ օգնում էր որբ երեխաներին թիկունք տեղափոխելու գործում[82]:

1915 Նոյեմբերի 29ին զօրավար Նազարբեկովը հրաման է ստանում անցնել յարձակման: Իր յուշերում, նա քննադատում է հրամանատարութեանը նման հրամանի համար, քանի որ զինծառայողները զգալի ջանքեր էին գործադրել իրենց կենցաղային պայմանները ապահովելու համար: Բացի այդ, զգալի նիւթական միջոցներ էին տրամադրուել թիկունքի ապահովման համար: Սա վկայում է այն մասին, որ Էրզրումի գործողութիւնը նախապատրաստուել է գաղտնիութեան այնպիսի պայմաններում, որ նոյնիսկ դիւզիայի հրամանատարները տեղեակ չեն եղել այդ մասին: Հենց այս հանգամանքն էլ եղել է այն հիմնական գրաւականը, որը հնարաւորութիւն տուեց զօրավար Եուդենիչին փայլուն կերպով իրականացնել իր մտայղացումը:

1915 Դեկտեմբերի 29ին Կովկասեան Դ. Բանակային Կորպուսի հրամանատարի պաշտօնում զօրավար Օգանովսկուն փոխարինում է զօրավար-տեղակալ Վլադիմիր դէ-Վիտտը: Նազարբեկեանը ցաւով է նշում զօրավարի հեռանալու մասին, քանի որ

նա գրեթէ միակն էր, որ լաւ էր վերաբերում հայերին եւ գնահատում էր հայկական կամաւորների կատարած աշխատանքը:

Դեկտեմբերի սկզբներին տեղացած ուժեղ ձիւնը դժուարացնում է զօրամասերի առաջխաղացումը: Այնուամենայնիւ ռուսական զօրքը շարունակում է յարձակումը: Ինչպէս նշում է զօրավարը, հայկական Ա., Բ., Գ., եւ Դ. խմբերը եւս մասնակցում են մարտական գործողութիւններին: Զարմանալի է, որ նա չի յիշատակում Զ. եւ Է. խմբերի մասին: Յատկապէս՝ Զ.ն, որը մասնակցել է Էրզրումի գործողութեան: Մնացած խմբերը, ռուսական եւ կազակական ստորաբաժանումների հետ իրականացնում էին թիկունքի պաշտպանութիւնը քրդական ջոկատներից:

Նազարբեկեանի ուժերը առաջանում էին դժուարին պայմաններում: Հրամանատարութիւնը պահանջում էր տեղեկութիւններ՝ հակառակորդի տեղակայման եւ ուժերի մասին: Տեղեկութիւնները, սակայն, դժուար էր հայթայթել առատ ձեան եւ ձիւնամրրիկների պատճառով: Դա էր պատճառը, որ հետախուզութիւնից վերադարձածների զգալի մասը վերադառնում էր ցրտահարուած:

1915 Դեկտեմբերի 19ին ստացւում է գլխաւոր հրամանատար Ռոմանովի հրահանգը՝ աշխատել քրդերին գրաւել իրենց կողմը եւ վերացնել հայերի ու քրդերի միջեւ եղած թշնամութիւնը: Զօրավարի համոզմամբ, դժուար է պատերազմական պայմաններում եւ կարճ ժամանակահատուածում իրականացնել նման մտադրութիւն: Ինքը շատ ջանքեր է գործադրել այդ թշնամութիւնը վերացնելու կամ մեղմելու համար: Նրա գնահատմամբ. «Քրդերի մշակոյթի մակարդակը գտնւում է չափազանց ցածր հարթակի վրայ. յատկապէս քրիստոնեաների կողոպուտն ու սպանութիւնը իւրաքանչիւր քրդի համար քաջութիւն է եւ հպարտութիւն»[83]:

Դեկտեմբերի 28ին հետախուզութիւնը տեղեկացնում է, որ զօրաբաժնի առջեւում գտնուող հակառակորդի դիրքերը, ինչպէս նաեւ գիւղերը լքուած են: Յաջորդ օրը ստացւում է Եուդենիչի հեռագիրն այն մասին, որ Թուրքեստանեան Բ. եւ Կովկասեան Ա. բանակային զօրամասերը անցել են լայնածաւալ յարձակման: Ահա այստեղ է, որ զօրավար Նազարբեկեանին յայտնի են դառնում Եուդենիչի նախապատրաստութիւնները: Զօրավարը վկայում է, որ լուրեր էին տարածուել, որ հրամանատարը վաղուց

էր որոշել անցնել յարձակման, սակայն գլխաւոր հրամանատար Ռոմանովը կտրականապէս դէմ է եղել: Ի վերջոյ զօրավար Եուդենիչը ողջ պատասխանատուութիւնն իր վրայ է վերցրել:

1916 Յունուարի ընթացքում զօրավար Նազարբեկեանի զօրամասերն իրականցնում էին ուժեղացուած հետախուզութիւն, որ դժուարանում էր անընդհատ տեղացող ձեան պատճառով: Ժամանակին չէր ստացւում պարէն: Զինուորների սնունդը խիստ սառնամանիքների պայմաններում անբաւարար էր, որն անդրադառնում էր նրանց մարտունակութեան վրայ: Գերի քրդից տեղեկանում են, որ հակառակորդը նահանջում է: Զօրավար Նազարբեկեանի ուժերը կարողանում են գրաւել Խնուսը: Գրոհին անմիջական մասնակցութիւն են ունենում նաեւ հայ կամաւորները: Զօրավարին զարմացրել էր ռուս հետեւակայինների կողմից մինչեւ գօտկատեղ հասնող ձեան պայմաններում հակառակորդի դիրքերի գրաւումը:

1916 Փետրուարի 3ին Նազարբեկեանը հրամայում է գրաւել Եփրատի գետանցումը եւ հնարաւորութեան դէպքում, նաեւ Մուշը: Նոյն օրը գիշերը, Մուշը գրաւում է Նազարբեկեանի զօրամասերից մէկի եւ հայ կամաւորների կողմից:

Փետրուարի 3ին ռուսական զօրքերը գրաւում են Էրզրումը: Ահա թէ ինչպէս է գնահատել այդ գործողութիւնը՝ Նազարբեկեանը. «Զնայած դաժան եղանակին, դժուար տեղանքին, պարէնի անխուսափելի պակասին եւ արեւմուտքից ու հարաւից թուրքերի օգնութեանը, [մարտերում] կոփուած Կովկասեան Բանակին յաջողւում է հնգօրեայ անօրինակ գրոհից յետոյ գրաւել Էրզրումը՝ Փոքր Ասիայում (Արեւմտեան Հայաստանում - Ռ.Ս.) թուրքական յենարանը: Նրա անկումն անխուսափելի էր, սակայն, որ այդ կարող էր տեղի ունենալ այդքան արագ՝ մեզ համար անակնկալ էր»[84]: Էրզրումի զինուորական պարէտ է նշանակւում Կովկասեան Բ. Հրաձգային Դիւիզիայի Զ. Գնդի հրամանատար, գնդապետ (յետագայում՝ զօրավար) Սիլիկեանը[85]:

Մուշում մնացել էին մօտ 50 ընտանիքներ, որոնց թւում կային նաեւ հայեր: Հայերի մեծ մասը սպանուել էր 1915ի ամռանը: Ողջ էին թողել միայն արհեստաւորների: Քաղաքում պարէնը սակաւ էր, հայկական թաղամասը՝ գրեթէ ամբողջութեամբ քանդուած:

Չնայած թուրքերը ծանր պարտութիւն էին կրել եւ նահանջել էին, քրդերը գտնուելով լեռներում շարունակում էին յարձակումները: Նրանց մարտավարութեան առաւել «սիրուած» տեսակը՝ դարանը եւ մեծաքանակ ուժերով յարձակումն էր: Այսպէս 20 քուրդ դարանակալ, յարձակուել էին եօթ ռուս զինուորների վրայ, սպանելով նրանցից երեքին: Նազարբեկեանը ստիպուած էր պատժիչ ջոկատ ուղարկել՝ քրդերին պատժելու համար[86]:

1916 Փետրուարի 8ին Նազարբեկեանը մէկ գումարտակ երկու թնդանօթով եւ կազակային հարիւրեակ ուղարկում է Բիթլիսի (Բաղէշ) ուղղութեամբ քրդական յարձակումները կասեցնելու նպատակով: Յաջողւում է ջախջախել քրդերին եւ զգալի կորուստներով հարկադրել դիմել փախուստի:

Նազարբեկեանը հրաման է ստանում Փետրուարի 11ին օգնական ուժ ուղարկել զօրավար Դիմիտրի Աբացիեւի ջոկատին, որը Դատուանից շարժւում է դէպի Բիթլիս: Ճանապարհին նրանք անընդհատ ընդհարումներ են ունենում քրդերի հետ: Առաջխաղացմանը չեն նպաստում նաեւ եղանակը եւ ժամանակից շուտ վարարած գետերն ու գետակները:

Եփրատի վրայ գտնուող կամուրջներից մէկի վրայ զօրավարը հանդիպում է Քեռու խմբի երկու կամաւորների, որոնք Էրզրումից եկել էին Մուշ՝ հարազատներին փնտռելու համար: Նազարբեկեանը նկատում է, որ կամրջի ելուստներն ամբողջութեամբ կարմիր են: Կամաւորներից մէկը պարզաբանում է, որ 1915ին թուրքերը եւ քրդերը կամրջից գետն են նետել հայերին. ովքեր հրաժարուել են ենթարկուել՝ գլխատել են: Այդտեղից էլ ելուստների վրայի կարմիր գոյնը[87]:

Փետրուարի 18ին Նազարբեկեանին այցելում են Մուշում մնացած մահմեդականների ներկայացուցիչները: Նրանք իրենց վրդովմունքն են յայտնում հայերի սպանդի առթիւ: Նրանցից յետոյ գալիս են ողջ մնացած հայերի ներկայացուցիչներ՝ երեք հոգի: Նրանք մանրամասն պատմում են թուրք-քրդական վայրագութիւնների մասին:

Մուշում եղած ժամանակ Նազարբեկեանին է դիմում իր ենթականերից՝ շտաբս-կապիտան Կրիմ-Շամխալովը: Նա զեկուցում է, որ իրեն յաջողուել է թուրքերից եւ հայերից մանրամասն ու ստոյգ տեղեկութիւններ հաւաքել օսմանեան

իշխանութիւնների կողմից հայերի նկատմամբ իրականացուած սպանդի մասին: Զօրավարը խնդրում է սպայից զեկուցագրի տեսքով ներկայացնել փաստերը, որը եւ արւում է: Կրիմ-Շամխալովի զեկուցագիրը ամբողջութեամբ ներկայացուած է զօրավարի յուշերում[88]:

Մուշի հայութեան կոտորածին ականատես են եղել գերմանական միսիոնէրական առաքելութեան երկու աշխատակցուհի՝ Ալմա Եոհանսոնը եւ Բոդիլ Բիորնը:

Փետրուարի 18ի լոյս 19ի գիշերը ռուսական զօրքերը գրաւում են Բիթլիսը: Մուշի գրաւումը հնարաւորութիւն է տալիս թուրք-քրդական ջարդերից փրկուած հայերին, հիմնականում սասունցիների, իջնել լեռներից քաղաք: Զօրավարը նշում է, որ սասունցիներին օժանդակում էին քրդերը: Ցաւօք, նման դէպքերը խիստ հազուադէպ էին:

Մուշից Բիթլիս տանող ճանապարհը անընդհատ ենթարկւում էր Մուսա բէկի կողմից ղեկավարուող քրդական յարձակումներին: Մուսա բէկին զօրավարը որակում է որպէս հայերի եւ ընդհանրապէս քրիստոնեաների երդուեալ թշնամի[89]: Քրդերի զոհը հիմնականում դառնում էին թիկունքային ստորաբաժանումների զինծառայողները: Միքանի անգամ ձեռնարկուած պատիժիչ արշաւախմբերը որեւէ էական ազդեցութիւն չեն ունենում:

Մուշում եւ շրջակայքում գտնուող զօրամասերը եւ զօրքը գտնւում էին ծայրայեղ ծանր պայմաններում՝ չէր բաւարարում սննդամթերքը: Համբարակային ծառայութիւնը չէր կարողանում հասցնել անհրաժեշտ պարէնը: Նազարբեկեանի խոստովանութեամբ ինքը չգիտէր, ինչ անել, որպէսզի մարդկանց ապահովի սննդամթերքով: Այս հիմնահարցը լուծում է հայ ազատագրական շարժման նշանաւոր գործիչ Ռոստոմը (Ստեփան Զորեան), որը հանդիսանում էր Համառուսաստանեան Քաղաքների Կով-կասեան Միութեան լիազօրը: Նա խնդրում է զօրավարին իրեն զինուորներ տրամադրել, որպէսզի լքուած գիւղերում հացահատիկ փնտռի: Նազարբեկեանը համաձայնւում է պայ-մանով որ եթէ գտնուած հացահատիկի կէսը տրուի զօրքին: Փոխադարձ համաձայնութիւնը հնարաւորութիւն է տալիս լուծել պարէնի հիմնախնդիրը[90]:

Նազարբեկեանը վկայում է այն գազանութիւնների մասին, որոնք կատարել էին թուրքերը եւ քրդերը Մշոյ Դաշտի հայկական գիւղերում: Նա ստանում էր համանման բազմաթիւ զեկուցագրեր ստորաբաժանումների հրամանատարներից: Զօրավարը զեկուցագրերը, ինչպէս նաեւ սպանդի լուսանկարները, գիւղատնտես եւ հասարակական գործիչ Աշոտ Աթանասեանի միջոցով, ուղարկում է Վանում գտնուող ամերիկեան ներկայացուցչին[91]:

Մարտի սկզբներին ստացուած հետախուզական տեղեկութիւնները վկայում են, որ թուրքերը նախաձեռնում են լայնածաւալ յարձակում: Նրանք ստացել էին օգնական ուժեր: Բացի այդ, աշխուժացել էր Մուսա բէկը, որին որպէս օգնութիւն օսմանեան հրամանատարութիւնը տրամադրել էր մօտ հազար զինուոր եւ մէկ թնդանօթ: Օսմանեան յարձակման գլխաւոր ուղղութիւնը հանդիսանալու էր Բիթլիսը:

Հիմք ընդունելով հետախուզական տեղեկութիւնները, Նազարբեկեանը որոշում է որպէս օգնական ուժ Բիթլիս ուղարկել մէկ գումարտակ եւ երկու լեռնային թնդանօթ: Միաժամանակ Մշոյ դաշտի բարձունքներում յայտնուեցին քրդական զինուած խմբեր: Մուշ եկած հայ փախստականները, որոնց ուղեկցում էին վստահելի քրդեր, յայտնում են, որ Մարտի 13ին Մուսա բէկը, մօտ հազար քրդերով անցնելու է յարձակման Բիթլիսի վրայ: Նրան հետեւելու էին օսմանեան կանոնաւոր ուժերը, այդ թւում՝ Դարդանէլի շրջանից տեղափոխուած: Ինչպէս նշւում են հրամանատարների զեկուցագրերում, թուրք զինուորները աչքի են ընկնում իրենց բարձր հասակով, ֆիզիկապէս լաւ պատրաստուած են եւ հանդերձաւորուած: Նրանք դիւրութեամբ տեղաշարժւում են լեռնային տեղանքով: Հաւանաբար սրանք այն զօրամասերի զինուորներն էին, որոնց վարժեցրել էին գերմանացի հրահանգիչները:

Ռուսական ուժերը կարողանում են ետ մղել հակառակորդի յարձակումը եւ իրենք անցնել հակայարձակման: Մարտերում աչքի է ընկնում Հայկական Ա. Խումբը: Մարտի 15ին խմբին հրամայւում է անցնել Բիթլիս՝ տեղի պաշտպանութիւնը ուժեղացնելու համար:

Մարտի 16ին Բիթլիսի համար մարտերը շարունակւում են նոյն թափով: Կրկին զօրամասերի հրամանատարներն իրենց զեկուցագրերում նշում են հակառակորդի լաւ սպառազինութեան եւ մարտական բարձր պատրաստականութեան, ինչպէս նաեւ քրդերի անընդհատ յարձակումների մասին: Սակայն, ռուսական ուժերը շարունակում են պահպանել իրենց դիրքերը թոյլ չտալով թուրք-քրդական ուժերին առաջանալ:

Մարտի 21ին Նազարբեկեանը հրամայում է աշխուժ գործողութիւններ ձեռնարկել քրդերին Մշոյ դաշտից դուրս մղելու համար: Սարսափահար քրդական պարագլուխները շտապում են իրենց հպատակութիւնը յայտնել ռուսներին: Այդ նոյն ժամանակ մարտերը Բիթլիսի շրջակայքում շարունակւում էին նոյն թափով:

Մարտի 25ին Նազարբեկեանը ստանում է զեկուցագիր, թէ թուրքերը անցել են յարձակման: Նրանց գործողութիւններից հետեւում է, որ ցանկանում են շրջանցել ռուսների պաշտպանութեան թեւերը եւ կտրել Բիթլիսը Մուշից: Իրենց գործողութիւններն աշխուժացնում են քրդերը:

Մարտի 26ին թուրք-քրդական յարձակումը շարունակւում է: Հակառակորդին յաջողւում է աւելի ու աւելի խորանալ ռուսական պաշտպանութեան թեւերի շրջանում: Դրութիւնը դառնում էր սպառնալի: Զօրավար Նազարբեկեանը պաշտպաններին ուղարկում է իր երկու վերջին գումարտակները:

Մարտի 27ին ռուսական պաշտպանութեան դրութիւնը դառնում է օրհասական: Նրան սպառնում էր լիակատար շրջապատում: Զօրավարին զարմացնում է Դ. Կորպուսի հրամանատարութեան անտարբեր վերաբերմունքը: Մարտի 28ին Մուշ է գալիս զօրամասի հրամանատար դէ-Վիտտը: Նազարբեկեանը նրան զեկուցում է Բիթլիսի շրջանում ստեղծուած սպառնալի իրավիճակի մասին եւ որքան զարմանալի է՝ զօրամասի հրամանատարը որեւէ կարգադրութիւն չի կատարում: Նազարբեկեանը թոյլտուութիւն է խնդրում հրամանատարից Մարտի 29ին գնալ Բիթլիս, որի համար ստանում է համաձայնութիւն:

Ճանապարհին հանդիպում են սասունցի փախստականներ՝ բացառապէս կանայք ու երեխաներ: Նրանք քայլում էին պատառոտուած հագուստներով, սարսափելի ծանր վիճակում:

Դա խորապէս յուզում է Նազարբեկեանին: Նա յուշագրում է. «ես շատ էի ցանկանում քաջալերել նրանց մայրենի լեզուով, սակայն յամօթ ինձ, ես այդ կարող էի անել միայն մտովի, քանի որ այնչափ չէի տիրապետում մայրենի լեզուին, որպէսզի անձնապէս կարողանայի կատարել իմ ցանկութիւնը»[92]:

Ճանապարհին Նազարբեկեանը տեղեկանում է, որ իրենց է մօտենում զօրամասի հրամանատարը: Այդ հանգամանքը զարմանք է պատճառում զօրավարին, որ չի հասկանում նման ընթացքի պատճառը: Բացի այդ, արդէն գիշեր էր եւ վտանգաւոր էր նման ճանապարհորդութիւնը, քանի որ կարող էր ենթարկուել քրդական յարձակման:

Բիթլիսից կրկին ստացւում են տագնապալի լուրեր: Նազարբեկեանը գտնում էր, որ իրադրութիւնը կարող է փրկել միայն ու միայն իր կողմից օգնութեան ուղարկած երեք գումարտակները:

Յաջորդ օրը Նազարբեկեանը եւ Դէ-Վիտտը շարունակում են իրենց ճանապարհը եւ տեղի է ունենում անսպասելին՝ նրանց է հասնում Կովկասեան Զ. Հրաձգային Գունդը չորս լեռնային թնդանօթներով: Հրամանատարն էր գնդապետ Սիլիկեանը: Դա խիստ զարմացնում է Նազարբեկեանին: Նրա համար ան-հասկանալի է մնում այն հանգամանքը, թէ ինչու էր զօրամասի հրամանատարը իրենից թաքցնում գնդի մօտենալը:

Պարզուեց զօրամասի հրամանատարի մտայղացումը. նա դիտաւորեալ ուշացնում էր օգնութիւնը, որպէսզի հակառակորդը է՛լ աւելի խորանայ Բիթլիսի լեռնանցքում, որի ժամանակ Զ. Գունդը Բիթլիսի եւ Սղերդի միջեւ կ՛անցնի թուրքերի թիկունքը, որով հակառակորդը կ՛ընկնի շրջապատման մէջ: Սակայն, քարտէզի վրայ ծրագրուած այս գործողութիւնն ունէր իր լուրջ թերութիւնը: Ո՛չ ռուսական եւ ո՛չ էլ թուրքական ռազմական տեղագրական քարտէզներում նախատեսուող երթուղու ճանա-պարհները նշուած էին, քանի որ նշուած լեռնային շրջանում այպիսիք գոյութիւն չունէին, եթէ նոյնիսկ կային, ապա գտնւում էին ձեան խորը շերտի տակ, ուստի նախատեսուած գործողութիւնը ի սկզբանէ դատապարտուած էր անյաջողութեան:

Նազարբեկեանը ստանում է ուրախալի լուր՝ Բիթլիսը կարողացել է դիմակայել շնորհիւ իր ուղարկած երեք

գումարտակների: Նրանց յաջողուել է շրջապատել թուրքական զօրամասերից մէկին, ջախջախել եւ գերել մօտ 500 զինուոր եւ սպայ ու գնդացիրներ[93]:

Առաւօտեան Նազարբեկեանը ականատես է լինում մի ապշեցուցիչ դէպքի՝ լեռներից վազելով գալիս էին մօտ 50 մերկ ռուս զինուորներ: Պարզուեց, որ նրանց գերել էին քրդերը: Վերջիններս ամբողջ գիշեր խնջոյք էին կազմակերպել: Նրանք իրենց հետ բերել էին մեծ թուով երիտասարդ հայուհիների, որոնց բոլորի աչքի առջեւ բռնաբարում էին, ապա ռուս զինուորներին մերկացնելով սկսում են կրակել նրանց վրայ: Մի մասին յաջողւում է փրկուել[94]:

Մարտի 31ին զօրամասի հրամանատարը եւ Նազարբեկեանը հասնում են Բիթլիս: Ապրիլի 1ին Նազարբեկեանը եւ Բիթլիսի ջոկատի հրամանատար, գնդապետ Օբրազցովը ուսումնասիրում են դիրքերը: Զօրավարը մէկ անգամ եւս համոզւում է, թէ ինչպիսի ծանր վիճակում է գտնուել Բիթլիսի ջոկատը եւ ինչպիսի գրեթէ անառիկ լեռնային դիրքեր են հարկադրուած եղել գրոհել զինուորները: Նոյն օրը Բիթլիս են գալիս օգնական ուժեր, որոնց թւում՝ Հայկական Գ. Խումբը Համազասպի հրամանատարութեամբ: Այդ ամէնի շնորհիւ Բիթլիսում կուտակւում են զգալի ուժեր եւ հիանալի հնարաւորութիւն է ստեղծւում հակահարուածել հակառակորդին եւ գրաւել քաղաքի վրայ իշխող բարձունքները, սակայն զօրամասի հրամանատարը նոյնիսկ հարկ չհամարեց պատասխանել առաջարկութեանը: Դէ-Վիտտը զօրավար Նազարբեկեանին նշանակում է Բիթլիսի ջոկատի հրամանատար, հրամայելով պաշտպանել քաղաքը:

Ապրիլի 6ին Նազարբեկեանը, իր շտաբի պետը եւ սակրաւորական ծառայութեան սպան ուսումնասիրում են տեղանքը եւ որոշում՝ որտեղ պէտք է կառուցուեն պաշտպանական դիրքերը: Այս աշխատանքում ընդգրկւում են ինչպէս զինծառայողները, այնպէս էլ աշխատունակ բնակչութիւնը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս հատուածում աւարտւում են զօրավար Նազարբեկեանի յուշերը: 1917 փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ, երբ

ռուսական Ժամանակաւոր Կառավարութիւնը թոյլատրեց հայերին կազմել սեփական զինուած ստորաբաժանումներ եւ պայմաններ ստեղծեց փախստականներին Արեւմտեան Հայաստան վերադառնալու համար, Նազարբեկեանը նոր եռանդով ձեռնամուխ եղաւ հայկական զինուորական կազմաւորումների ձեւաւորմանը: Ցաւօք, 1917 հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ, երբ Կովկասեան Բանակը սկսեց զանգուածաբար լքել ռուս-թուրքական ռազմաճակատը, հայկական ուժերը բաւարար չէին ռազմաճակատը պաշտպանելու համար: 1918 Փետրուարին օսմանեան բանակն անցնում է յարձակման: Նոր կազմաւորուած հայկական զինուժը հարկադրուած էր նահանջել: Նոյնիսկ նման պայմաններում հնարաւոր եղաւ հակահարուած տալ ոսոխին: 1918 մայիսեան հերոսամարտերի ընթացքում հայկական բանակը եւ աշխարհազօրային ստորաբաժանումները կարողացան հայութեանը փրկել վերջնական կործանումից, ջախջախելով թուրքերին Սարդարապատի եւ Բաշ Ապարանի ճակատամարտերում: Այդ յաղթանակներում իր լուման ունի զօրավար Թովմաս Նազարբեկեանը: Ճակատամարտերի բովում հռչակուեց Հայաստանի առաջին Հանրապետութիւնը, որի զինուած ուժերի կայացման ակունքներում, ի թիւս այլոց, կանգնած էր Նազարբեկեանը:

1919 Մարտի 25ին Նազարբեկեանը հանդիսացել է ՀՀ Զինուորական Խորհրդի նախագահ, իսկ Յուլիսի 15ին շնորհուել է զօրավար-տեղակալի կոչում:

1991ին Հայաստանի Հանրապետութեան հռչակումից յետոյ կառավարութիւնը քայլեր կատարեց վերականգնելու խորհրդային տարիներին անհարկի մոռացուած շատ անուններ, որոնց թւում էր Նազարբեկեանը: ՀՀ Պաշտպանութեան Նախարարութիւնը նրա անունով սահմանեց մեդալ, իսկ Երեւանի թաղամասերից մէկը կոչուեց Նազարբեկեանի անունով:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ըստ պաշտօնական տեղեկանքի՝ մահացել է 1931 Փետրուարի 17ին:

[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 50:

[3] 1921 Յունուարի 14ին Երեւան է գալիս Համառուսաստանեան Արտակարգ Յանձնաժողովի եւ ԺԱ. Կարմիր Բանակի Յատուկ Բաժնի ներկայացուցիչ Գէորգ Աթարբեկովը (Աթարբեկեան): 1920 Յունուարի 20ին նրա պնդմամբ կազմւում է նախկին ՀՀ բանակի հայ եւ ռուս սպաների անուանացանկը: Յունուարի 24ին սպաները՝ աւելի քան հազար հոգի, որոնց թւում զօրավար-տեղակալներ Նազարբեկեանը, Սիլիկեանը, զօրավար-հազարապետ Պօղոս Բէկ-Փիրումեանը եւ ուրիշներ ձերբակալւում եւ աքսորւում են: Սպաներին հարկադրում են ոտքով Երեւանից հասնել Դիլիջան, որտեղից նրանց գնացքով տեղափոխում Բաքու: Նրանցից 500 հոգու ուղարկում են Ռիազանի համակենտրոնացման ճամբարը (Վլադիմիր Ն. Ղազախէցեան, *Հայաստանը 1920-1940 թթ.*, Երեւան, Հրատ., 2006, էջ 34-36. նաեւ՝ Կ. Յարութիւնեան, *Հայկական Ազգային Զօրամիաւորումները 1918-1945 Թուականներին*, Երեւան, Հրատ., 2002, էջ 89-92): Զօրավար Նազարբեկեանին սկզբնապէս տեղափոխում են Մոսկուա՝ տխրահռչակ Բուտիրեան Բանտը, որտեղ նրա առողջութիւնն աւելի է վատանում: Այստեղից նրան եւ միքանի սպաների ուղարկում են Ռիազան (աւելի մանրամասն տե՛ս՝ G. A. Martirosian, *Ofitseri Respubliki Armeniya V Kontslagere Goroda Ryazani*, Ryazan, 2002 [Հայաստանի Հանրապետութեան սպաները Ռիազան քաղաքի համակենտրոնացման ճամբարում] http:// stopgulag.org/object/8352602 5?lc=ru . նաեւ՝ A. A. Grigorova, A. I. Grigorova, *Zakliuchennie Ryazanskogo Kontslageria RSFSR 1919-1923 Godov* (ՌԽՖՍՀ Ռիազանի նահանգային համակենտրոնացման ճամբարի բանտարկեալները 1919-1923), Ryazan, 2013 http://genrogge.ru/riazanskiy_konclager_1919-1923/index.htm: Աքսորավայրից վերադառնալուց յետոյ զօրավարը հաստատւում է Թիֆլիսում: Նա իր գոյութիւնը որոշ ժամանակ պահպանում է Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Կոմիտէի /American Committee for Relief in the Near East/ կողմից տրուող մթերքի հաշուին, սակայն 1929ի վերջին, երբ Կոմիտէն փակւում է, Նազարբեկեանը յայտնւում է ծայրայեղ աղքատութեան մէջ եւ նոյնիսկ մտածում է ինքնասպանութեան մասին: Քանի որ նա դրամ չունէր, որպէսզի վճարէր բնակվարձը, նրան սպառնում էին դուրս հանել բնակարանից (ՀԱԱ, ֆոնդ 45, ցուցակ 1, գործ 45, թերթ 1): Այնուամենայնիւ զօրավարն իր մէջ ուժ է գտնում, որպէսզի թղթին յանձնի Ա. Համաշխարհային Պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում իր մղած մարտական գործողութիւնների պատմութիւնը:

[4] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 41, թ. 13:

[5] 1930 Դեկտեմբերի 23ին Հ. Հախվերդեանը ձերբակալւում է Լենինգրադում խորհրդային անվտանգութեան մարմինների կողմից յօրինուած ամբաստանութեան հիման վրայ՝ իբր անդամակցել է միապետական գաղտնի կազմակերպութեանը, որի նպատակն էր տապալել խորհրդային իշխանութիւնը: 1931 Ապրիլի 28ին գնդակահարուել է: 1989 Հոկտեմբերի 20ին յետմահու արդարացուել է:

[6] Խորհրդային իշխանութիւնների կողմից Սիլիկեանը բանտարկուել է չորս անգամ: Բոլոր դէպքերում էլ ներկայացուել են անհեթեթ ու կեղծ

մեղադրանքներ: Գնդակահարուել է 1937 Նոյեմբերի 22ին: Յետմահու արդարացուել է 1987 Նոյեմբերի 10ին (մանրամասն տե՛ս՝ Ռ. Սահակեան, «Գեներալ-լեյտենանտ Մովսէս Սիլիկեան (Կենսագրութեան Անյայտ Էջեր)», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2012, № 2, էջ 63-74. նաեւ՝ M. L. Karapetyan, "General-Leytenant Movses Silikian (K 150-letio So Dnya Rojdeniya)" (Զօրավարտեղակալ Մովսէս Սիլիկեան (ծննդեան 150ամեակի առթիւ), *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2012, թիւ 4, էջ 291-294):

[7] Ռուսաստանցի պատմաբան եւ լրագրող Կոնստանտին Զալեսկին կազմելով Ա. Համաշխարհային Պատերազմի մասնակից զօրավարների կենսագրականները, զօրավար Նազարբեկեանի կենսագրութիւնում հարկ է համարել յիշատակել, որ 1915 Յուլիսի 9ի (22ին) թուրքական յարձակման ժամանակ զօրավարը չի ցուցաբերել նախաձեռնութիւն եւ որեւէ կերպ չի աջակցել Կովկասեան Դ. Բանակային Կորպուսին Եփրատեան Գործողութեան ժամանակ: Եւ դա պատճառ է հանդիսացել, որ թուրքական խմբաւորումը չոչնչացուի: Սակայն, միաժամանակ Զալեսկին նշում է, որ Նազարբեկեանը պարգեւատրուել է Ս. Գէորգիի Դ. Աստիճանի Շքանշանով, բայց չպարզաբանելով, թէ այդ ինչ գործողութեան համար է պարգեւատրուել «նախաձեռնութիւն» չցուցաբերած զօրավարը (K. A. Zaleskiy, *Pervaya Mirovaya Voyna. Biograficheskiy Slovar'* Ա. Համաշխարհային Պատերազմ. կենսագրական բառարան, Մոսկուա, 2000, էջ 160): Կովկասի փոխարքայ եւ Կովկասեան Բանակի գլխաւոր հրամանատար, զօրավար Ի. Վորոնցով-Դաշկովը, բազմաթիւ սպաների թւում, միայն Նազարբեկեանին, Դիլմանի նշանաւոր ճակատամարտում տարած յաղթանակի համար, պարգեւատրել է ոչ միայն ռուսական Ս. Գէորգիի Դ. Աստիճանի Շքանշանով, այլեւ ֆրանսիական «Մարտական Խաչ» (Médaille Militaire) մեդալով, որով պարգեւատրուել էր ռուսական բանակի գերագոյն գլխաւոր հրամանատար, զօրավար Նիկոլայ Ռոմանովը (կրտսեր):

[8] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 22, թ. 9:

[9] Աւելի մանրամասն տե՛ս՝ Ռ. Սահակեան, «Ռուբէն Աւագ Քահանայ Բեկգուլեանցի Նամակները Արեւմտեան Հայաստանում Ռուսական Իշխանութիւնների Քաղաքականութեան Մասին», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2009, № 3, էջ 297-301:

[10] Մեր օրերում էլ անբարեխիղճ պատմաբանների կողմից, ինչպէս օրինակ Ռ. Սաֆարովը, օգտագործում են նման «հաւաստի» տեղեկութիւններ եւ ռուսական բանակում ծառայող հայերին ու կամաւորներին մեղադրում, որ նրանք 1915-1918 իբր 1,19 միլիոն մահմեդականներ են կոտորել: Իր հերթին նա համանման ամբաստանութիւն է ներկայացնում ռուսներին, որոնք իբր Բաթումի Նահանգում 1915ին ոչնչացրել են 88 հազար մահմեդական (R. Safarov, Uchastiye Narodov Kavkaza V Pervoy Miroıoy Voyne՝ Կովկասի ժողովուրդների մասնակցութիւնը Ա. Համաշխարհային Պատերազմին) http://www.kavkazoved.info /news/2015/02/07/uchastie-narodov-kavkaza-v-pervoj-mirovoj-vojne.html: Նշենք, որ 1914ի աշնանը օսմանեան բանակը եւ «Թեշքի-

լաթը մահուսէ» տխրահռչակ կազմակերպութիւնը Բաթումի Նահանգում, ինչպէս նաեւ Կարսի Մարզում իրականացրել են հայերի զանգուածային սպանութիւններ (Ռ. Սահակեան, «Փաստաթղթեր Առաջին Աշխարհամարտի Տարիներին Ռուսահպատակ Հայերի Զանգուածային Կոտորածների Մասին», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2012, № 4, էջ 256-276. նաեւ նոյնի՝ «Բաթումի Նահանգի Հայութեան Կողոպուտն Ու Սպանութիւնները Ա. Համաշխարհայինի Սկզբում՝ 1914ի Աշնանը (Փաստաթղթեր)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հատոր ԼԳ.*, Պէյրութ, 2013, էջ 7-45:

[11] "Armyanskiy Korpus Protiv Turetskikh Voysk (Noyabr 1917 G.-Yul 1918 G. Vospominaniya Generala F. I. Nazarbekova„ (Հայկական զօրամասը թուրքական զօրքերի դէմ (1917 Նոյեմբեր-1918 Յուլիս) *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 1992, N 3, էջ 34-153:

[12] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ.

[13] Տե՛ս՝ E. V. Maslovskiy, "Mirovaya Voyna Na Kavkazskom Fronte 1914-1917 G." (Համաշխարհային պատերազմը կովկասեան ռազմաճակատում 1914-1917), *Strategicheskiy Ocherk*, Փարիզ, 1933, էջ 32). նաեւ՝ *Istoriya Pervoy Mirovoy Voyni 1914-1918* (Առաջին համաշխարհային պատերազմի պատմութիւնը 1914-1917), *Հատոր 1*, Մոսկուա, 1975, էջ 197:

[14] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 5-6: Տեղափոխուած զօրամասերի թւում էր Երիւանեան 13րդ *լէյբ-գուարդիական* գունդը: Խորհրդային Միութեան մարաջախտ Բ. Մ. Շապոշնիկովի վկայութեամբ, Երիւանեան Գունդը «ռուսական բանակի ամենահին գունդն էր, որը հիմնուել էր [ցար] Միխայիլ Ֆէոդորովիչ Ռոմանովի [1596-1645] օրօք, որի բանակատեղին Թիֆլիսի մօտ էր» (E. B. Shaposhnikov, *Voyenno-Istoricheskie Trudi* Ռազմագիտական երկեր, Մոսկուա, 1974, էջ 82):

[15] S. M. Budyonniy, *Projdenniy Put* (Անցած ուղին), Մոսկուա, 1959, էջ 12-13:

[16] G. W. Pipya, *Germanskiy Imperializm V Zakavkazie V 1910-1918 GG.* (Գերման կայսերապաշտութիւնը Անդրկովկասում 1910-1918), Մոսկուա, 1978, էջ 50:

[17] Անուանումը ստացել է Իրանական Ատրպատականի աղաւաղուած ձեւից: Ռուսական զօրամասերը յաճախ կոչում էին այն տեղանունների անուններով, որտեղ նրանք մղում էին մարտական գործողութիւնները: Այսպէս օրինակ, զօրավար Նազարբեկեանի Կովկասեան Բ. Հետեւակային Դիւիզիան՝ Բիթլիսի, ապա Մուշի ջոկատ:

[18] Զօրավարը յուշերում յաճախ է անդրադառնում Զաւրիեանին, բարձր է գնահատում նրա կատարած հսկայաձաւալ աշխատանքները, որոնք նպատակ ունէին վերացնել Ա. Խմբում եղած թերութիւնները: Ա. Խումբը Նազարբեկեանի գնահատմամբ՝ Զաւրիեանի զաւակն էր (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 15):

[19] Կովկասեան Բանակի թիկունքի պետ Եւգենի Մասլովսկին իր ուսումնասիրութիւնում հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում վերը նշուածի մասին: Պատերազմի նախօրեակին ԿՌՕի հետախուզութեան պետ է նշնակւում գլխաւոր շտաբի ակադեմիան աւարտած մի սպայ, որն իր սխալ

գործողութիւնների հետեւանքով լուծարում է մինչ այդ ստեղծուած գործակալական հզօր ցանցը, փոխարէնը ոչինչ չստեղծելով (Maslowskiy, էջ 47):

[20] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 14-15 շրջ.:

[21] Իրականում խմբերի թիւը վեցն էր: Ե. Խումբը Վարդանի (Սարգիս Մեհրաբեան) հրամանատարութեամբ չմեկնեց ռազմաճակատ, քանի որ զէնք չունէր: Մէկ խումբ, որը հիմնականում կազմուած էր հնչակեան կամաւորներից, ձեւաւորուել էր Կարսում: Մարտական գործողութիւններին մասնակցելուց յետոյ, 1915 Յունուարին, լուծարուեց: Հօրավարը սխալւում է, նշելով, որ կամաւորական ստորաբաժանումները ձեւաւորուել են հայերի առաջարկով. նախաձեռնողը եղել է Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովը:

[22] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 14 շրջ.-15:

[23] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 5 շրջ.-6:

[24] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 19 շրջ.:

[25] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 26:

[26] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 34:

[27] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 36 շրջ.:

[28] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 36:

[29] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 40 շրջ.:

[30] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 47 եւ շրջ.:

[31] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 47 շրջ.:

[32] Նազարբեկեանը տեղեկանում է զօրավար Զեռնոզուբովից, որ վերջինս Զաւրիեանի օգնութեամբ սովորում է հայերէն, քանի որ նախատեսում է իրեն՝ Զեռնոզուբովին նշանակել Արեւմտեան Հայաստանի զօրավար-նահանգապետ: Նազարբեկեանը թերահաւատօրէն է վերաբերւում զօրավարին այդ պաշտօնին նշանակելուն, քանի որ շատերն էին յաւակնում դառնալ զօրավար-նահանգապետ (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 12): Վկայակոչուած փաստը կրկին ու կրկին է հաւաստում, որ Ռուսական Կայսրութիւնը որեւէ նպատակ չունէր Արեւմտեան Հայաստանին ինքնավարութիւն շնորհել:

[33] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. , թ. :

[34] N. Korsun, *Alashkertskaya I Khamadanskaya Operatsii Na Kavkazskom Fronte Mirovoy Voyni* (Ալաշկերտեան եւ համադանեան գործողութիւնները կովկասեան ռազմաճակատում) Մոսկուա, 1940, էջ 154. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 43 եւ շրջ.:

[35] Maslowskiy, էջ 156:

[36] Korsun, էջ 42:

[37] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. , թ. 33 շրջ.:

[38] ՀԱԱ, ֆ. 45, ց. , 1գ. , թ. 28:

[39] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. , թ. 28 շրջ.:

[40] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2 թ. 34 շրջ.:

[41] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 32 շրջ.: Նազարբեկեանն այն կարծիքի էր, որ Ադրբեջանական Ջոկատում թուրքերն ունէին իրենց լրտեսը, որն ամենայն մանրամասնութեամբ տեղեկացնում էր ռուսական ուժերի տեղաշարժի եւ թուաքանակի մասին (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 32 շրջ.):

[42] *Զօրավար Անդրանիկի Կովկասեան Ճակատի Պատմական Օրագրութիւնը, 1914-1917. Օրագրուած Զօրավարին Թիկնապահ Հինուորէն*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2000, էջ 18:

[43] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 37 շրջ. :

[44] "*Andranik Ozanian. Dokumenti I Materiali* (Անդրանիկ Օզանեան. փաստաթղթեր եւ նիւթեր)", *Բանբեր Հայասանի Արխիւների*, 1990, էջ 166):

[45] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 42 եւ շրջ.:

[46] Մուրատ Կարապետեան, *Հայկական Կամաւորական Խմբերը Եւ Ազգային Գումարտակները Կովկասեան Ռազմաճակատում (1914-1917 թթ.)*, Երեւան,ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1999, էջ 80-81:

[47] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 51, 54:

[48] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 49 եւ շրջ.:

[49] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 58 շրջ.:

[50] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 4:

[51] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 6:

[52] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 7 եւ շրջ.:

[53] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 12-13 շրջ.:

[54] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 16:

[55] ԺԹ. դարում Ռուսաստանը պայքար էր մղում Հիւսիսային Կովկասում ամրապնդուելու համար: Լեռնականները կատաղի դիմադրութիւն են ցոյց տալիս ռուսական զօրքերին: 1859ին ռուսներին յաջողւում է հասնել յաղթանակի եւ զգալի թուով մահմեդական լեռնականներ հեռանում են Օսմանեան Կայսրութիւն: Նրանք՝ ադըղներ, չեչէններ, կաբարդիններ եւ այլ ժողովուրդներ յայտնի էին չերքէզ հաւաքական անունով:

[56] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 21:

[57] Իւան Օբրազցով (1859-1938), ռուս զինուորական, գնդապետ, 1917ից՝ զօրավար:

[58] Կոտորակառումք:

[59] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 25 շրջ.:

[60] Կազակային հետեւակ ստորաբաժանում: Հիմնականում օգտագործուել են հետախուզական գործողութիւնների համար:

[61] Միխայիլ Զինկեւիչ (1883-1945), Ա. Աշխարհամարտի մասնակից, գնդապետ: Հակաբոլշեւիկեան Սպիտակ Շարժման մասնակից: Բ. Համաշխարհային Պատերազմի տարիներին գործակցել է գերմանացիների հետ: Սպանուել է հարաւսլաւացի պարտիզանների դէմ մղած մարտերից մէկում:

[62] Զինուորական կոչում կազակային զօրքերում, որը հաւասարազօր էր փոխգնդապետի կոչման:

[63] Պիոտր Աբաշկին (1868-1934), ռուս զինուորական, կազակ, զօրավար-հազարապետ:

[64] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 33 շրջ.:

[65] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 34:

[66] Կլաաս-Գուստաւ-Ռոբերտ Շարպանտիէ (1858-1918), ռուսական բանակի զօրավար, Կովկասեան Կազակային Դիւիզիայի հրամանատար:

[67] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 38-39:

[68] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 44:

[69] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 47 շրջ.:

[70] Ալեքսանդր Նոսկով (1870-?), ռուս զինուորական, կազակ, գնդապետ, Լաբինսկեան Ա. Կազակային Գնդի հրամանատար: Նազարբեկեանն իր յուշերում կարեւոր փաստ է հաղորդում այդ «գերակշիռ» ուժերի մասին: Նա գրում է. «Ջոկատի շտաբ կապի համար գործուղուել էր Լաբինսկեան Կազ[ակային] Գնդի խորունժի (ազգանունը չեմ յիշում): Նա յետագայում իմ շտաբի սպաներին պատմել է, երբ Մուշի դաշտից [1915] Յուլիսի 9ին Լաբինսկեան Գնդի հրամանատարն ինձ համար զեկուցագիր էր պատրաստում՝ դիմեց սպաներին եւ ասաց, որ պէտք է հարկադրել զօրավար Ֆ. Նազարբեկովին նահանջել: Հարցրեց, թէ որքան թռչուն կայ ծառի վրայ: Ինչ որ մէկը հաշուեց եւ ասաց՝ 12: Դէ այդպէս էլ զեկուցէք, որ Մշոյ դաշտից յարձակւում են 12 թաբուրներ (գումարտակներ - Ռ. Ս.)» (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 48 շրջ.-49):

[71] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 4, թ. :

[72] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 47 շրջ.:

[73] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 5, թ. 12:

[74] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 5, թ. 25: Բերկրիի Կիրճում վասպուրականցի փախստականները ենթարկւում են քրդական աւազակախմբերի յարձակմանը: Չունենալով անհրաժեշտ թուով պաշտպանութիւն, հայերն ունենում են զգալի կորուստներ: Ամերիկացի միսիոնէրների վկայութեամբ շատերն ինքնասպանութիւն էին գործում, իսկ մայրերը երեխաների հետ նետւում էին կիրճով անցնող վարարած գետը, որպէսզի քրդերի ձեռքը չընկնեն: 1916ին Վան վերադարձող ամերիկացի միսիոնէրները հաշուել էին այս ու այն կողմ ընկած կմախքները, որոնց մօտաւոր թիւը կազմել է եօթ հազարից աւելի (C. D. Ussher, G.H. Knapp, *An American Physician in Turkey. Narratives of Adventures in Peace and War*, New York, Boston, 1917, Houghton Mifflin Company, էջ 311:

[75] Աւագ սպայական կոչում հեծելազօրում:

[76] Նիկոլայ Բարաթով (Բարաթաշվիլի, 1865-1947), ռուս զինուորական, Կովկասեան Ա Կազակային Դիւիզիայի հրամանատար:

[77] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 6, թ. 3: Աւելի մանրամասն տե՛ս՝ Ռ. Սահակեան, *Արեւմտեան Հայաստանի Ռազմաքաղաքական եւ Վարչատնտեսական Իրավիճակը (1914 թ. Յուլիս-1917 թ. Փետրուար)*, Երեւան, ՀՀԳԱԱ, Գիտութիւն Հրատ., 2015, էջ 215-254:

[78] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 6, թ. 4 շրջ.-5: Մեդալի անուանումն է՝ "Médaille Militaire". սահմանուել է 1852ին: Իր նշանակութեամբ մեդալը զիջում է միայն «Պատուոյ Լեգէոն» շքանշանին:

[79] Նազարբեկեանը զօրավար-տեղակալի կոչմանն է արժանանում միայն Հայաստանի Հանրապետութիւնում:

[80] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 6, թ. 23:

[81] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 6, թ. 20 շրջ.-21:

[82] Ռուբէն Բեկգուլեանց (1875-1935), աւագ քահանայ:

[83] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 7, թ. 23: Նազարբեկեանի զօրամաս էին ժամանել Ն. Ռոմանովի կողմից ուղարկուած երկու անձեր, որոնցից մէկը Դամասկոսում ռուսական նախկին հիւպատոս իշխան Շախովսկին էր: Նրանց յանձնարարուած էր բանակցել քուրդ ցեղապետ Քեամիլ բէյի հետ, վերջինիս դէպի ռուսները կողմնորոշելու համար (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 35 շրջ.):

[84] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 7 շրջ.-8:

[85] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 30:

[86] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 15 շրջ.:

[87] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 17 շրջ.-18:

[88] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 20 շրջ.-21: Շտաբս-կապիտանի զեկուցագիրն առաջին անգամ հրատարակուել է ակադեմիկոս Մ. Ներսիսեանի կողմից (*Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում. Փաստաթղթերի եւ Նիւթերի Ժողովածու*, կազմ.՝ Մ. Գ. Ներսիսեան, Ռ. Գ. Սահակեան, խմբ.՝ Մ. Գ. Ներսիսեան, Երեւան, Հայաստան Հրատ., 1991, էջ 501-504): Կրիմ-Շամխալի զեկուցագրի պատճէն գտնուել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Լէոյի անձնական արխիւում (ֆ. 1, ց. 1, գ. 226, թ. 1-6): ՀԱԱում մեզ յաջողուեց գտնել շտաբս-կապիտանի զեկուցագրի բնագիրը Նազարբեկեանի արխիւում, որը հրատարակուեց ամբողջութեամբ (Ռ. Սահակեան, «Աշոտ Աթանասեանի Գործունէութիւնը Արեւմտեան Հայաստանի Վերաշինութեան Գործում», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2007, N 1-2, էջ 37-54): Մեզ յաջողուեց որոշ տեղեկութիւններ յայտնաբերել Միխայիլ Կրիմ-Շամխալովի (Սոկոլով) անձի մասին: 1918 Ապրիլին փոխգնդապետ Կրիմ-Շամխալովը հանդիսացել է Հայկական զօրամասի հետախուզական բաժնի պետը: Մայիսի 12ին օպերատիւ տուեալներ են ստացուել Ալեքսանդրապոլի վրայ թուրքերի հնարաւոր յարձակման մասին: Այդ մասին զեկուցւում է Կրիմ-Շամխալովին, որը վճռականօրէն հերքում է ստացուած տեղեկութիւնը: Աւելին, Մայիսի 15ին թուրքերի կողմից Ալեքսանդրապոլ ներխուժելուց առաջ փոխգնդապետը հրաժարւում է հեռանալ՝ պատճառաբանելով, որ կինը հիւանդ է (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 101): Նշուածը ենթադրել է տալիս, որ Կրիմ-Շամխալովը կա՛մ եղել է թաքնուած թշնամի, որին փնտռում էր ռուսական հակահետախուզութիւնը դեռեւս 1915ին, կա՛մ որոշել էր անցնել թուրքերի կողմը: Խորհրդային Միութեան մարաջախտ Ս. Բուդիոննին իր յուշերում հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում Կրիմ-Շամխալովի մասին: Վերջինս եղել է կաբարդինեան, ըստ այլ տեղեկութեան՝ կարաչայ իշխան, որը

ընդունել է ուղղափառութիւն: Նրա մասին որպէս մարդ եւ սպայ Բուդիոննին բացասական կարծիք է յայտնում: Վերջինս կարգապահական խախտման համար Կրիմ-Շամխալովի կողմից ներկայացուել էր ռազմա-դաշտային դատարանին, որը վճռել էր մահապատժի ենթարկել: Սակայն դատավճիռը փոխուել էր. ապագայ մարաջախտին զրկել էին Գէորգիեւեան Դ. Աստիճանի Մեդալից (Budyonniy, էջ 13, 16, 21):

[89] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 35 շրջ.:

[90] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 19 եւ շրջ.:

[91] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 20:

[92] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 12, թ. 19 եւ շրջ.:

[93] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 12, թ. 23:

[94] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 12, թ. 24:

GENERAL THOVMAS NAZARPEGIAN'S UNPUBLISHED MEMOIRES ON THE MILITARY OPERATIONS OF THE RUSSO-TURKISH (CAUCASIAN) BATTLEFRONT DURING WWI (1914 JULY-1916 APRIL)

(Summary)

Ruben Sahakian
rubensahakyan58@gmail.com

General Thovmas Nazerpegian (Ivan Nazarpegov, 1855-1931) is one of the few Armenian military figures who participated in a series of famous wars, like the Russian-Turkish war of 1877-1878, the Russian-Japanese war of 1904-1905, Russian-Turkish battles in WWI (1914-1917), the February-June 1918 Armenian-Turkish war, the February 1918 Armenian-Georgian war, the 1919-1920 Armenian-Azeri fights and finally in the 1920 Armenian-Turkish clashes.

His military achievements during the 1917-1920 battles are well established. The article, for the first time, illustrates the general's battle record during 1914-1916 on the Caucasian front, where he played a key role in the WWI Turkish-Russian battles.

Thanks to his military and strategic efforts, the Russian Imperial army scored a decisive victory in Northern Persia, near Tilman, which hindered the advance of the Ottoman army towards the Caucasus.

The Memoires illuminate and clarify a number of controversial issues related to this capable General's war legacy.